Հայտարարում են, որ եկել են հիբրիդային հարձակումների դեմն առնելու, բայց իրենք են իրականացնում հիբրիդային հարձակում Հայաստանի վրա եւ քարոզչություն անում: Հետագայում, եթե հաջողվի Արեւմուտքին, Հարավային Կովկասում կբացվի նոր ճակատ Ռուսաստանի դեմ, կասեն՝ մինչեւ վերջին հայը պետք է պայքարեք ռուսների դեմ:

Կարդացեք՝ էջ 4

Եվրոպացիները, գալով Հայաստան, խփեցին Ռուսաստանին հայտարարված պատերազմի կնիքը՝ Հայաստանի անունից հայտարարելով, որ ընտրությունը կատարված է, որ Արեւմուտքը գրավել է Հայաստանը Ռուսաստանից: Այդ իմաստով հատկանշական է Էմանուել Մակրոնի համեմատությունը. նա Հայաստանը համեմատեց Վենեսուելայի եւ Սիրիայի հետ:

Կարդացեք՝ էջ 5

Ժամանակին Վազգեն Սարգսյանը հայտարարում էր. «21-րդ դարը մերն է լինելու»: Մովսես Գորգիսյանն էլ ասում էր. «Կեցցե այն Հայաստանը, որ վաղն է գալու»: Ոչ մեկս չէր կասկածում նրանց սրտաբուխ խոսքին: Ավա՛ղ, 21-րդ դարը «չեկավ» մեզ վրա: Ամեն Աստծո օր մի քար է ընկնում մեր պետության շենքից, ու վերջը չի երեւում:

Կարդացեք՝ էջ 8

Դրամարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 71 (4206), 6 մայիս, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

Նիկոլ Փաշինյանն ու իր ցուցակի առաջին 50 համարը հունիսի 7-ի նախընտրական քարոզարշավը մտադիր են սկսել հարավից՝ Սյունիքից: Մեր տեղեկություններով, մայիսի 8-ին նրանք կշրջեն Սիսիանում եւ հարակից համայնքներում, իսկ մայիսի 9-ին մարզկենտրոն Կապանում մեծ հանրահավաք կանեն: Մենք գրել էինք, որ ՔՊ-ն որոշել է բոլոր մարզկենտրոններում հանրահավաք անել, քանի որ ընդդիմախոսները հենց դա են համարում նրանց աքիլեսյան գարշապարը, որ, ունենալով վարչական ռեսուրս եւ լծակներ, այնուամենայնիվ, չեն կարողանում մարդաշատ հանրահավաքներ անել, այլ համերգներ են կազմակերպում, որ երաժշտություն լսելու համար մարդիկ գան: Հիմա որոշել են ապացուցել, որ կարող են, իսկ վերջում էլ ծրագրում են Երեւանում ամփոփիչ հանրահավաք անել: «Վիզ են դրել» եւ հրահանգել ոչ միայն Սյունիքի, այլեւ հարակից մարզի պատասխանատուներին՝ սրով ու թրով մարդկանց բերել, այնպես անել, որ ներկայանալի հավաք կազմակերպվի: Ի դեպ, ՔՊ վարչությունը որոշել է, որ նախընտրական քարոզարշավի ընթացքում մարզային այցերին պետք է մասնակցի ընտրացուցակի առաջին 50-յակը, իսկ երբ բացականեր լինեն 50-ից, հաջորդ 50-յակից մարդկանց կհրավիրեն, որ ավտոբուսը դատարկ չերեւա: Այս որոշումը կրկին դժգոհություն է առաջացրել հետին հորիզոնականների թեկնածուների շրջանում. նրանք այլեւս կասկած չունեն, որ մեծ բանի չեն կարող հավակնել, որքան էլ իրենց «կտեր տան», թե՝ եթե սահմանադրական մեծամասնություն ունենանք, բոլորիդ համար լավ կլինի:

Չնայած իշխող թիմում ի սկզբանե հակված էին, որ նախընտրական պաստառի վրա լինի միայն իրենց «ֆեյք բրենդը» դարձրած խաղաղության մասին գրառումը, օրինակ՝ «Տեր կանգնիր խաղաղությանը», եւ սկզբնական պաստառներն էլ հենց այդպիսին էին ու փակցվել էին հանրապետությունով մեկ, սակայն հիմա որոշել են, որ, այդուհանդերձ, առաջնորդի՝ Փաշինյանի լուսանկարներն էլ պետք է լինեն, քանի որ, ամեն դեպքում, իրենց էլեկտորատում գերակշռում են Փաշինյանի «ֆանատները»՝ նրանց ո՛չ խաղաղությունն է հետաքրքրում, ո՛չ էլ այլ բան, ուղղակի Փաշինյանին ընկալում են որպես ժողովրդի ծոցից դուրս եկած մարդ՝ իրենցից մեկը: Բայց զավեշտն այն է, որ նոր պլակատն ուսումնասիրելով մարդիկ նկատել են, որ այս հարցում էլ Փաշինյանն ընդօրինակել է Սերժ Սարգսյանին՝ քարոզչական պաստառի վրա ֆոտոշոփ արված լուսանկար է, որից պարզ երեւում է, որ ՔՊ առաջնորդի ականջները «հետ են տարել», որ շատ «լոշտակ» չերեւան, ինչպես ժամանակին Սերժ Սարգսյանի լուսանկարներն էին մոնտաժում:

Փիառ եւ գովազդ

Ինչքան ստեր ասվեցին այս օրերին Հայաստանում, կեղծ ժպիտներ, գովեստներ: Դատարկ՝ ոչինչ չնշանակող փաստաթղթեր: Մանավանդ Ֆրանսիայի նախագահի այցի շրջանակներում մեծ թվով հռչակագրեր ու հուշագրեր ստորագրվեցին, ձեռքսեղմումներ եղան, թղթապանակների փոխանակություն, համատեղ լուսանկարներ: Վերջինը, ի դեպ, ամենակարեւոր հանգամանքն է, որովհետեւ նման քանակի լուսանկարների իմաստը բացառապես ընտրողի վրա հոգեբանական ներգործություն ապահովելն է: Բայց վերադառնանք փաստաթղթերին՝ մեկը մյուսից ուշագրավ վերնագրերով: Օրինակ. «Արհեստական բանականության, կիբեռանվտանգության եւ կիսահաղորդիչների ոլորտներում համագործակցության վերաբերյալ մտադրությունների նամակ»: Հիշեցնենք, որ մեր երկրում անգամ լուսացույցների աշխատանքը չեն կարողանում էլեկտրոնային եղանակով կարգավորել՝ պարեկների սուլոցներով են երթեւեկությունը կառավարում: Մյուս փաստաթուղթը, որը ստորագրել են ԿԳՄՍ նախարարը եւ Ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի գործադիր տնօրենը, կոչվում է «ՀՀ Կառավարության եւ Ժառանգության պաշտպանության միջազգային դաշինքի միջեւ փոխըմբռնման հուշագիր»: Սա այն կառավարությունն է, որն ասում է՝ ոչինչ, որ հայկական մշակութային արժեքներն Արցախում ոչնչացնում են. իրենց հողն է, ինչ ուզեն, կանեն: Փաստաթղթերի ստորագրմանը, չգիտես ինչու, մասնակցել է նաեւ երկու մասնավոր բանկի ներկայացուցիչ՝ վարկային ֆինանսավորման պայմանագրեր են կնքել ֆրանսիական բանկերի հետ: Պաշտպանության փոխնախարարը «հանդերձանքի մատակարարման պայմանագիր» է կնքել մի ընկերության հետ, ինչը նշանակում է, որ բանակի հագուստը Ֆրանսիայից են բերելու: Նաեւ ուղղաթիռների ու ինքնաթիռների վաճառքի պայմանագրեր են կնքվել: Այնպիսիք, որ ընկերություններն ամեն օր կնքում են՝ առանց պետական այցերի:

Թեպետ ՔՊ-ում վերեւից հրահանգ է իջել՝ ԵՄ գագաթնաժողովը քարոզչական դրոշակ դարձնել՝ այն ներկայացնելով որպես Հայաստանի ինքնիշխանության, սուվերենության դրսեւորում, սակայն ՔՊ շարքերում խուլ դժգոհություն կա: Հատկապես ՌԴ-ի հետ հարաբերությունների ինչ-որ մակարդակ պահելու կողմնակիցներն են հիասթափված ու զայրացած մեր բյուջեի վրա միլիարդներ նստած այս միջոցառումից: Նրանք մասնավոր զրույցներում խոստովանում են, որ այս միջոցառումը Հայաստանին ոչինչ չտվեց, փոխարենը՝ եվրոպացիները Հայաստանը հերթական անգամ իրենց աշխարհաքաղաքական հակամարտության պլացդարմը դարձրին՝ Ռուսաստանի դեմ իրենց ագրեսիան դրսեւորելով, եւ հայտնի չէ, թե սա մեզ վրա ինչ է նստելու ապագայում:

ԶԵԼԵՆՍԿՈՒ ՀԵՏ ԱԹՍ-ՆԵՐԻ ԳՈՎ ԿՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԵՆ

ԵՄ գագաթնաժողովի շրջանակներում Նիկոլ Փաշինյանը հանդիպել է Վոլոդիմիր Զելենսկու հետ: Ըստ պաշտոնական հաղորդագրության, «քննարկել են Հայաստան-Ուկրաինա երկկողմ փոխգործակցության զարգացման հեռանկարները՝ ընդգծելով փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության խորացման կարեւորությունը, մտքեր են փոխանակել տարածաշրջանային եւ գլոբալ զարգացումների շուրջ, ընդգծվել է կայուն եւ տեւական խաղաղության առաջմղման անհրաժեշտությունը»: Զելենսկին հանդիպումից հետո ասել է. «Քննարկեցինք տարածաշրջանում ստեղծված իրավիճակը եւ անվտանգության մարտահրավերներն ու սպառնալիքները: Խոսեցինք տնտեսական գործընկերության զարգացման մասին: Ես առաջարկեցի վերսկսել Տնտեսական համագործակցության միջկառավարական համատեղ հանձնաժողովի աշխատանքը եւ դրա հաջորդ նիստն անել այս տարի՝ Կիեւում»: Մեր տեղեկություններով, հանդիպմանը քննարկվել է նաեւ պաշտպանության ոլորտում համագործակցության հարցը: Ներկա է եղել նաեւ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը, որն ասել է, թե Հայաստանը շահագրգռված է՝ շարունակելու փորձի փոխանակումն անօդաչու ավիացիայի՝ ԱԹՍ-ների զարգացման հարցում, եւ ընդգծել է, որ «ուկրաինական փորձն անգին է Հայաստանի զինված ուժերի համար»: Զելենսկին պատրաստակամություն է հայտնել՝ շարունակել աշխատանքն այս ուղղությամբ, եւ ներկայացրել է Ուկրաինայի հնարավորությունները՝ տարբեր նշանակության անօդաչու սարքերի արտադրության ոլորտում: Պայմանավորվել են շարունակել խորհրդատվություններն այդ թեմայի շուրջ: Մեզ հաջողվեց պարզել, որ 2025 թ. ամռանը ԱԱԾ հատուկ նշանակության ստորաբաժանումներն Ուկրաինայում ԱԹՍ-ների օգտագործման կարճատեւ պատրաստություն են անցել, ինչն էլ հենց նկատի է ունեցել Ա. Գրիգորյանը:

ԱԼԻԵՎԸ ԵՐԵՎԱՆ ԳԱԼՈՒ Է ԱՅՆՊԵՍ, ԻՆՉՊԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐ 2-ՐԴԸ ՄՏԱՎ ՓԱՐԻԶ՝ ՁԻՈՒ ՎՐԱ, ՀԱՂԹԱԾԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ

*«Հրապարակի» զրուցակիցն ադրբեջանագետ **Արմինե Ադիբեկյանն** է:*

- Երեւանում անցկացվող Եվրոպական քաղաքական համայնքի (ԵՔՀ) 8-րդ գագաթնաժողովի ժամանակ տեսակապի միջոցով Բաքվի բռնապետ Իլհամ Ալիեւը կրկին խոսել է հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին, արցախցիների հասցեին դարձյալ վիրավորական արտահայտություններ է արել, սեպարատիզմ է կոչել արցախյան շարժումը, ասել է, որ պատերազմի հանցագործներին է պատժում, վերականգնել է իր երկրի տարածքային ամբողջականությունը, եւ արդեն Հայաստանի հետ հաստատված խաղաղությունը պտուղներ է տալիս՝ Ադրբեջանի տարածքով Հայաստան բեռներ են գալիս, եւ վառելիք են վաճառում մեզ: Փաշինյանը որեւէ կերպ չի հակադարձել նրան, փոխարենը արձագանքել է Եվրապառլամենտի նախագահ Մեցոլան՝ նշելով, որ Եվրոպայի ընդունած ցանկացած որոշում արվում է ընդհանուր քննարկումների արդյունքում, խոսքը վերջին բանաձեւի մասին է՝ ի պաշտպանություն արցախցիների վերադարձի իրավունքի: Ինչի՞ մասին էր նրա ելույթը:

- Ալիեւի քննադատություններն ուղղված էին Եվրոպային, այլ ոչ թե՝ Հայաստանին: Հայաստանի հետ Ալիեւը խոսելու թեմա չունի: Հայաստանը՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, կատարում է բոլոր պահանջները, այդ պրետենզիաներն ուղղված էին Եվրոպային: Եվրոպան նախ Ադրբեջանի հետ փող է աշխատում, մյուս կողմից էլ քննադատում է նույն Ադրբեջանին՝ բարձրացնելով տրիգերային հարցեր: Դրանք հիմնականում վերաբերում են Արցախին, Արցախի ժողովրդին: Ալիեւին դա զայրացնում է: Ասում է՝ ինձ հետ փող եք աշխատում, ուրեմն չպետք է բարձրաձայնեք այն հարցերի մասին, որոնք ինձ մոտ բարկություն են առաջացնում: Այստեղ խնդիրն այն է, որ Բաքուն չի կարող իրեն թույլ տալ հրաժարվել Եվրոպայի հետ աշխատելուց, միեւնույն ժամանակ Եվրոպան էլ իրեն թույլ չի տա՝ Ադրբեջանին ենթարկել այնպիսի սանկցիաների, ինչպիսիք Ռուսաստանի պարագայում է արել: Արդյունքում ստացվում է, որ Եվրոպան ու Ադրբեջանը շատ ամուր թելերով կապված են իրար, բայց Եվրոպան, օգտվելով առիթից, մարդասիրական արժեքների մասին է բարձրաձայնում: Արդյունքում առաջացել է «տուպիկ»: Այնպես որ, Ալիեւի հայտարարությունների ֆաբուլան ուղղված էր Եվրոպային: Ալիեւն ասաց, որ եթե ինքը տարբեր ֆինանսական պրոյեկտներ է իրականացնում Եվրոպայի հետ, ապա իրեն նեղող բոլոր թեմաները պետք է մնան ստվերում եւ չշոշափվեն: Եվրոպան էլ ասում է, որ իր համար միեւնույն է, թե Ալիեւին ինչը դուր չի գալիս, ինքը չի ենթարկվելու ճնշումների եւ շանտաժի: Ալիեւը թքած ունի հայերի եւ Հայաստանի վրա: Նա առհասարակ դիվանագիտական զսպվածության վրա թքած ունի, եւ մենք այդ մասին գիտենք դեռ 2003 թվականից:

- Ի վերջո՝ ասում են, որ խաղաղություն է հաստատվել, համենայնդեպս՝ իշխանությունների մակարդակով: Այդ դեպքում ինչո՞ւ Ալիեւը չեկավ Երեւան:

- Ալիեւը Երեւան գալու է այնպես, ինչպես Ալեքսանդր Երկրորդը մտավ Փարիզ՝ ձիու վրա, հաղթածի, զավթածի կարգավիճակով: Նա չի գալու Երեւան ինչ-որ մի հերթական միջոցառման համար, ինչպես որ Էրդողանը չեկավ, այլ ուղարկեց իր օգնականին: Իլհամ Ալիեւն իրեն զգում է որպես Ալեքսանդր Երկրորդ, որպես Իոսիֆ Ստալին: Նա ուզում է սպիտակ ձիու վրա՝ թուրը ձեռքին գա Հայաստան եւ զավթի մեր բոլոր տարածքները՝ որպես իշխող այր, այլ ոչ թե հիսունմեկը, մի ինչ-որ հյուր....

- Թեպետ Ադրբեջանի իշխանությունը նախընտրական այս փուլում բացահայտ աջակցում է Փաշինյանին, սակայն նա իր ելույթում գովեստի խոսքեր չշռայլեց նրան: Ինչո՞ւ:

- Գովեստի խոսքեր ասում ես այն մարդկանց մասին, որոնց հարգում ես, ընդունում ես, սիրում ես եւ ընդունում ես գոնե քեզ հավասար: Նիկոլ Փաշինյանն Ալիեւի համար պարտնյոր չէ, նոքյար է ընդամենը: Նոքյարին չեն գովում, այն էլ՝ այդ մակարդակի միջոցառումների ժամանակ: Մաքսիմում՝ նա կարող է Նիկոլի թուշիկները շոյել, իսկ Նիկոլն էլ լեզուն դուրս գցի՝ երջանկությունից, եւ չոքի Ալիեւի կողքին: Ադրբեջանի համար Փաշինյանը լիդեր չէ, այն էլ՝ ուժեղ, նա ընդամենը մի կենդանի է, որը կատարում է Ադրբեջանի բոլոր հրահանգները՝ առանց մտածելու, առանց առարկելու եւ առանց հետեւանքները հաշվարկելու, սակայն Ադրբեջանում հնչում են այսօր մտքեր, որ այժմ անգամ իրենց համար մեկ է, թե ով կընտրվի վարչապետ Հայաստանում: Ադրբեջանն այն համոզմունքին է, որ ով էլ գա, իրենք նույն տրամաբանությամբ են աշխատելու, քանի որ նախադրյալներն արդեն իսկ ձեւավորվել են՝ Նիկոլի շնորհիվ: Նա Հայաստանն այնպիսի ծուղակի մեջ է մտցրել, որ ով էլ գա իշխանության, պետք է խոսի ծնկի եկածի տրամաբանության մեջ ու դիրքերից:

- Ալիեւը խոսեց նաեւ այն մասին, որ Հայաստան նավթ է ուղարկվել Ադրբեջանից, որ տնտեսական կապեր են հաստատվել կողմերի միջեւ, եւ այլն:

- Իլհամ Ալիեւի խոսքերը պարբերաբար վերարտադրում է Նիկոլը, խոսում է նույն մարդը: Նրանց համար խաղաղությունը ոչ թե անվտանգությունն է, այլ, օրինակ, ամիսը մեկ Հայաստան նավթ մտցնելն է: Նավթը դարձրել են խաղաղության խորհրդանիշ, որ եթե նավթ ու կոմբիկեր կամ քիմիկատներ են ուղարկել Հայաստան, վերջ, ուրեմն Ալիեւի պատկերացմամբ՝ դա խաղաղություն է: Ի դեպ, մի շատ հետաքրքիր բան: Նիկոլ Փաշինյանը խոսում է առեւտուր անելու մասին, սակայն Հայաստանն Ադրբեջանից ներմուծել է մի քանի միլիոնի ապրանք՝ 2025 թվականին: Իսկ Ադրբեջանը Հայաստանից Ադրբեջան արտահանել է ընդամենը 956 դոլարի ապրանք: Տնտեսագիտական ֆակուլտետի առաջին կուրսի ցանկացած ուսանող գիտի, որ տնտեսական աճն ապահովում է բացառապես արտահանումը, բայց ո՛չ երբեք ներմուծումը: Ներմուծումը երբեք չի հանգեցնում տնտեսական աճի: Ամոթ, է, գոնե այս պարզ գիտելիքներին էլ չեն տիրապետում: Հայաստանն այսօր հարստացնում է Երեւանն իր պապենական հայրենիքը համարող Ադրբեջանին, փոխարենը 956 դոլարի ապրանք է արտահանում.... Ադրբեջանը Հայաստանից երբեք ոչինչ չի առնելու, որովհետեւ լավ գիտի՝ մի գեղեցիկ օր այդ փողերով շուռ ենք գալու իր դեմ:

Նյութերը՝ Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑ ԹՈՂՆՎԵՑ

ԵՄ 8-րդ գագաթնաժողովի շրջանակներում մի քանի փաստաթուղթ ստորագրվեց՝ հուշագրեր, համագործակցության հայտարարություններ: Ստորագրվեց նաեւ մեր պատմական Անիի հայտնի կամրջի համատեղ վերականգնման աշխատանքներ իրականացնելու մասին արձանագրություն, որը ստորագրեցին հայկական կողմից Ռուբեն Ռուբինյանը, թուրքական կողմից՝ Սերդար Քըլըչը: Այդ մասին տեղեկությունը Նիկոլ Փաշինյանը սոցցանցի իր էջում էլ է հրապարակել: Փաշինյանը, որն արգելում է «Արցախ» անունը հնչեցնել, խոսել Արարատ լեռան մասին ու Արարատի պատկերն է հանում բոլոր տեղերից, անգամ Խոր Վիրապը հակառակ կողմից է նկարել տալիս, որ ֆոնին Արարատը չերեւա, եւ ասում է, որ այդ խոսույթը պատերազմ է հրահրում, հանկարծ հետամուտ է, որ Թուրքիայի տարածքում գտնվող՝ Հայաստանի Հանրապետության հետ ոչ մի կապ չունեցող Անիի կամուրջը վերականգնվի: Ի՞նչ է տալու մեզ Անիի կամուրջը, մանավանդ՝ եթե հայ-թուրքական սահմանը բաց չէ, եւ մենք չենք կարող ուղիղ այցելել Անի:

Պատմաբան, Ցեղասպանության թանգարանի նախկին տնօրեն **Հայկ Դեմոյանը**, «Հրապարակի» հետ զրույցում խոսելով այս մասին, նկատում է. «Այս հարցն իրականում պետք է այլ հարթությունների մեջ դիտարկենք: Դեռեւս 2010 թվականին ես ԱՄՆ այն ժամանակվա դեսպանին մի առաջարկ էի արել, որ գոնե միջնորդեն՝ Հայաստան այցելած զբոսաշրջիկները կարողանան Անիի տարածք անցնել՝ կամրջով: Ես այս մասին առաջին անգամ եմ խոսում: Դեսպանն ինձ պատասխանեց, որ շատ դժվար, գրեթե անհնարին բան եմ ցանկանում, քանի որ թուրքական կողմի հետ դժվար է այդ հարցի շուրջ բանակցելը: Եթե Թուրքիան ու Հայաստանը պաշտոնապես չունեն միջպետական հարաբերություններ, եթե դեռեւս դիվանագիտական կապեր չեն հաստատվել, եւ կա փակ սահման, որը Թուրքիայի կողմից առնվազն ոչ բարիդրացիական հարաբերությունների դրսեւորում է, ապա միջազգային ո՞ր օրենսդրական հենքի վրա են կողմերն ինչ-որ թղթի տակ ստորագրում, որպեսզի այն լինի լեգիտիմ: Այստեղ կան հարցեր: Ի՞նչ է կամուրջ կոչվածը: Երկու հենասյուն են, մի մասը ՀՀ տարածքում է գտնվում, սակայն՝ չեզոք գոտում, մյուսը՝ Թուրքիայում: Ստացվում է, որ այդ կամուրջը երկու տեր ունի, մեկը՝ Հայաստանում, մյուսը՝ Թուրքիայում: Այս պարագայում ՀՀ քաղաքացին չի կարող իր տարածքով Անիի կամրջին մոտենալ, քանի որ այլ երկրի սահմանապահ ուժերն այնտեղ ռեժիմային վերահսկողություն են իրականացնում, որը կոչվում է չեզոք սահման: Անին տեսնելու համար մենք այլ պետության զինուժի ներկայացուցչին համապատասխան փաստաթղթեր ենք ցույց տալիս, որպեսզի կարողանանք առաջ շարժվել: Ինչ վերաբերում է նրան, թե ինչու է Թուրքիան համաձայնել ստորագրել այդ փաստաթղթի տակ, ապա դա մի փոքրիկ կոնֆետ էր Փաշինյանի համար, որպեսզի որոշ ժամանակ զբաղվի: Զուտ քարոզչական նպատակով դա արվեց՝ իմիջ ստեղծելու համար: Իսկ ի՞նչ չարեցին ՀՀ իշխանությունները, բաց թողնելով նման բացառիկ հնարավորությունը, որն ուղղակի ամոթալի է: Նույնիսկ չկարողացան բանակցել, որպեսզի հայ-թուրքական սահմաններն ապաշրջափակվեին: Սա շատ հարմար առիթ էր: Իշխանություններին դրա համար պետք է 2-ից հանած նշանակել: Սա պատմական հնարավորություն էր, որը հերթական անգամ բաց թողնվեց: Երեւանում երբեք այդպիսի ներկայանալի հավաք չի եղել, որ այդքան պետությունների ղեկավարներ գան: Այդքան ծախս է արվել՝ հարկատուներիս հաշվին, սակայն Հայաստանն արդյունքում որեւէ բան չստացավ: Դա է նիկոլական ուզուրպացված իշխանության դեմքը: Մի հատ կոնֆետի, խաղալիքի նման բան տվեցին՝ Անիի կամուրջ անվանումով, ինչը կարող է անգամ կյանքի էլ չկոչվել: Կամ, ենթադրենք, կամուրջը նորոգվեց, երկու կողմերը իրար ձեռք սեղմեցին, իսկ հետո, ի՞նչ է լինելու հետո: Սահմաններն ապաշրջափակվելո՞ւ են, թե՞ ոչ: Լավագույն դեպքում կասեն՝ գնացեք, Անին տեսեք, լաց եղեք, հետ եկեք, իսկ ռազմավարական առումով՝ զրո քայլ»:

*Հարցազրույց ՔՊ-ական պատգամավոր **Արմեն Խաչատրյանի** հետ*

ԱՅՈ, 8 ՏԱՐԻ ԱՌԱՋ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՈՒԲՅԵԿՏԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՐ

- Եվրոպական գագաթնաժողովը վերածվեց հակառուսականության շքերթի, նպատակ ունեիք այս միջոցառումը քաղաքական կապիտալի վերածել նախընտրական շրջանում, չե՞ք կարծում, որ այս ամենը լուրջ հետեւանքներ կարող է ունենալ հայ ժողովրդի համար, ինչի մասին ահազանգում են ձեր ընդդիմախոսները:

- Ցավը գիտե՞ք ինչումն ա, որ ՀՀ ցանկացած զարգացում, ձեռքբերում ներկայացվում է որպես հակառուսականություն: Տնտեսության մեջ զարգացում ենք ունենում, ասում ենք՝ հակառուսական է, արտաքին հարաբերությունների մեջ դիվերսիֆիկացնում ենք մեր հարաբերությունները, ասում ենք՝ հակառուսական է: Որեւէ հակառուսական բան չկա, մենք առաջնորդվում ենք մեր պետական շահով եւ, այդ շահով պայմանավորված, նաեւ որոշում ենք մեր արտաքին քաղաքականությունը, ամեն ինչ անում ենք, որ ՌԴ-ի հետ մեր հարաբերություններն ավելի լավանան:

- Երբ գործող իշխանությունը գործիք է դառնում եվրոպացիների ձեռքում՝ ընդդեմ Ռուսաստանի, ինչպե՞ս եք փորձում լավացնել հարաբերությունները: Օրինակ, Մակրոնը հայտարարում է, թե 8 տարի առաջ Հայաստանը Ռուսաստանի արբանյակն էր, ու դրա համար էլ պետության առաջնորդներ չէին այցելում, եւ ոչ ոք չի հակադարձում: Կամ՝ սպառնալիքներ են հնչեցնում ՌԴ-ի հասցեին, քննարկում են 102-րդ ռազմաբազայի մնալ-չմնալու հարցը:

- Հիմա դուք պետք է շատ ուրախանաք, որ աշխարհի լիդերները, առաջնորդները գալիս են Հայաստան, ի՞նչն է սխալ ասվել:

- Նախկին իշխանությունների ժամանակ Դուք պաշտոն էիք զբաղեցնում, ով-ով՝ Դուք պետք է որ լավ հիշեք՝ առաջ չէի՞ն գալիս:

- Առաջ առաջնորդներ չէին գալիս Հայաստան, եւ, այո, 8 տարի առաջ Հայաստանը սուբյեկտայնություն չի ունեցել, այդ պատճառով էլ չէին գալիս:

- Հեղափոխությունից առաջ չե՞ք հիշում որեւէ պետության ղեկավարի, որ եկած լինի Հայաստան, Ցեղասպանության 100-ամյա տարելիցն ի՞լ եք մոռացել՝ քանի տասնյակ ղեկավար էր այցելել:

- Դե, Ցեղասպանությունն ուրիշ բան է, բայց քաղաքական լուրջ միջոցառումներ, այս մասսայականությամբ այցեր չեն եղել: Այն ժամանակ Հայաստանը նման սուբյեկտայնություն չուներ միջազգային հարթությունում, հիմա Հայաստանը լուրջ պետություն է, ժողովրդավարության արժեքները պահպանող պետություն է, եւ դա այսօր գնահատվում է միջազգային հանրության կողմից, ու պետք չէ սա անընդհատ բերել-հակադրել Ռուսաստանի հետ:

- Բայց գալիս են՝ Հայաստանում Ռուսաստանի դեմ խոսում են, դա մեզ գնահատե՞լ է նշանակում, ուրիշ ի՞նչ են արել:

- Հայաստանի Հանրապետությունն այսօր առավել քան անկախ է, ինքն է որոշում իր ճակատագիրը, ինքն է որոշումներ կայացնում՝ առանց հաշվի առնելու այլ երկրների դիրքորոշումները: Թե ռազմաբազային ինչ ճակատագիր է սպասվում, դա էլ է ամբողջությամբ Հայաստանի կառավարության որոշելու հարցը, մնացածը՝ ինչ կասեն, չեն ասի, դա որեւէ նշանակություն չունի: Որեւէ մեկը մեզ այլեւս չի կարող ասել, թե ինչ անենք, ի տարբերություն նախկինների:

- Բայց Ադրբեջանն ու Թուրքիան կարծես լավ էլ ասում են, Ալիեւը հենց երեկ հերթական նվաստացուցիչ ելույթն ունեցավ մեր մասին, Բաքվում պահվող մեր ռազմագերիներին սեպարատիստներ կոչեց եւ այլն, Փաշինյանը, հակադարձելու փոխարեն, շնորհակալություն հայտնեց միայն: Այսպե՞ս եք խաղաղություն հաստատել՝ ամեն ստորացման դիմանալով:

- Դուք ամեն ինչ փորձում եք անել ձեր երազած երկրին վերադառնալու համար, ոնց որ 10 տարի առաջ էր: Երբ երկրի որոշումները կայացնում են ուրիշ երկրներում, ուրիշ կաբինետներում, ուրիշ մարդիկ: Նման բան այլեւս չի լինելու, մենք ենք որոշում: Ալիեւն ինչ է ասել, ինչ չի ասել, ինձ չի հետաքրքրում, ես չեմ էլ լսել իր ելույթը:

- Ես ներկայացրի...

- Չէ, այդպիսի բան, ըստ էության, չի ասել: Այդտեղ հավաքված լիդերներն իրենց կարծիքն են արտահայտել ընդամենը. եթե Հայաստանում էլ չլիներ, բոլորը, այդ թվում՝ Ալիեւը, հայտնելու էին իրենց կարծիքները:

- Ձեր նախընտրական լոզունգը խաղաղության մասին է, մինչդեռ խաղաղության մյուս կողմը՝ Ադրբեջանը, պարբերաբար հոխորտում է, նվաստացնում ձեզ, իսկ դուք լռում եք. սրա մասին է խոսքը:

- Մեզ երբեւէ որեւէ մեկը չի կարող ստորացնի... դուք չեք նկատում, որ մյուս կողմի հռետորաբանությունը բավականին փոխվել է վերջին մեկ տարվա ընթացքում, եւ սա պետք է դուք գնահատեք, որը չեք անում:

- Գնահատենք, որ Արցախում մեր մշակութային ժառանգությունն է ոչնչացնում խաղաղության մյուս կողմը, 300 հազար ադրբեջանցիների մասին խոսում, իսկ դուք լռում եք:

- Մեկ-մեկուկես տարի առաջ շատ ավելի վատ հռետորաբանություն էր, եւ անընդհատ պատերազմի վտանգը կախված էր 2 պետությունների միջեւ, իսկ ձեր ասածը ժամանակի ընթացքում կլուծվի:

- Այո, ամբողջությամբ կոչնչացնեն մեր եկեղեցիները, մշակութային ժառանգությունը:

- Ինչի՞ չեք գնահատում, որ պատերազմի վտանգը վերացել է, տարիուկես առաջ մենք պատերազմից էինք խոսում, մշակութային արժեքներից չէինք խոսում, դրանք երկրորդական, չորրորդական հարցեր էին:

- Պատերազմի վտանգը ոչ թե վերացել է, այլ ինչ ուզում են, տալիս եք, ինչ էլ չեք տվել, ձեր ընդդիմախոսների կարծիքով՝ ընտրություններից հետո կտաք, հիմա լռում են, որ վերարտադրվեք ու ավարտին հասցնեք այս գործընթացը:

- Ակնհայտ է, որ պատերազմի վտանգը վերացել է, մեր եւ Ադրբեջանի միջեւ ստորագրված համաձայնագիր կա, իսկ մնացածը ձեր ցանկությունն է:

- Նախ՝ ստորագրված չէ խաղաղության պայմանագիրը, այլ՝ նախաստորագրված է. պայմաններ են առաջ քաշում՝ ստորագրելու համար:

- Հիմա ստորագրված է, նախա է, թե հետո է, ամեն դեպքում, ստորագրված փաստաթղթեր կան, եւ դուք՝ բոլորդ էլ շատ լավ տեսնում եք, որ խաղաղության գործընթացն անխուսափելի է: Իսկ մեր ընդդիմախոսների հայտարարությունների պատճառն այն է, որ ինչ-որ երկրների հատուկ ծառայությունների գրասենյակներից ինչ գրում են, նա էլ ասում են, նրանք ոչ թե մեր պետության շահով են առաջնորդվում, այլ՝ այդ երկրների:

- Բա ո՞ւր է ԱԱԾ-ն՝ ինչո՞ւ այդ «ագենտներով» չի զբաղվում:

- Իր տեղում է մեր ԱԱԾ-ն: Բաներ կան, որ սահմանն անցնում են, բռնում են:

- Ո՞ր երկրի գրասենյակներից են գրում: ՌԴ-ի՞ն նկատի ունեք:

- Այո, նաեւ Ռուսաստանին, դա ո՞վ չգիտի, որ այստեղ ուժեր կան, որոնց օրակարգը ձեւավորվում է Ռուսաստանի շահերից:

- Ձեզ մեղադրում են Ադրբեջանի ու Թուրքիայի օրակարգով առաջնորդվելու մեջ, որ անգամ մեր մշակութային ժառանգությունն իրենցն եք համարում եւ վանդալիզմը չեք դատապարտում:

- Շատ վատ է, որ մշակութային ժառանգություն են ոչնչացնում, բայց իմացեք, որ խաղաղությունը մեկ օրում չեն հաստատում, վարչապետն էլ է ասում, որ պետք է խնամել այն, պահպանել եւ տեր կանգնել:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

50 ՏՈԿՈՍ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՔՊ-Ն ԿԱՐՈՂ Է ՀԱՂԹԵԼ, 70-Ի ԴԵՊՔՈՒՄ՝ ՈՉ

Նախօրեին ԿԸՀ-ն ներկայացրեց ընտրություններին մասնակցող 19 քաղաքական ուժերի հերթականությունը՝ ըստ իրենց ներկայացուցիչների կատարած վիճակահանության: Որոշ ուժեր այնքան են ոգեւորվել, որ տպավորություն է, թե ընտրական համարներից ինչ-որ բան է կախված: Իսկ դա ընդամենը ընտրական թերթիկի վրա գրվող համարն է: Զրուցել ենք քաղաքագետ **Արմեն Բաղդասարյանի** հետ:

- Որոշ ուժեր շատ են ուրախացել, որ ընտրություններում իրենց ընտրական համարը 1-ն է կամ՝ 15-ը: Այդ ոգեւորության պատճառը ո՞րն է: Ի՞նչ է կախված այդ թվերից:

- Այն, թե ով որ համարն է զբաղեցնելու, դրանից ոչինչ բացարձակապես չի փոխվելու, ուղղակի այդտեղ 2 հարց կա: Կան ուժեր, որոնք, նախ, ասելիք չունեն եւ հույս ունեն, որ գոնե համարով հիշելի կդառնան: Անգամ այնպիսի ուժեր են մասնակցում ընտրություններին, որոնց անունը մարդիկ չեն հիշում, դեմքով նույնիսկ չեն ճանաչում: Այժմ փորձում են իրենք իրենց գոնե թվերով գովազդել, որպեսզի հանրությունն իմանա իրենց գոյության մասին: Ինչ խոսք, այդ ամենը նաեւ վկայում է այս ընտրությունների անլրջության մասին: Իշխանություններին, այնուամենայնիվ, հաջողվեց անլրջացնել ընտրությունների պրոցեսը, ինչո՞ւ՝ որովհետեւ մասնակցում է 19 ուժ, որի կեսից ավելիին հանրությունը չի էլ ճանաչում, եւ քարոզարշավն էլ է անլուրջ ձեւով ընթանում, սարդ մարդու կերպարանքով եւ այլն: Զավեշտի վերածեցին այն, ինչն այս փուլում պետք է լիներ խիստ կարեւոր: Հասկանալի է, որ կա մի թիվ, որից հետո մարդիկ դժվարանում են կատարել իրենց ընտրությունը: 19 ուժ՝ այն դեպքում, երբ ուղղակի 3 ուժից ավելի չպետք է լիներ: Պետք է լինեին պայմանական ռուսամետներ, արեւմտամետներ՝ կամ թուրքամետներ, քանի որ, ցավոք, տարածաշրջանում Արեւմուտքի կուրատորը Թուրքիան է, եւ այն ուժերը, ովքեր պետք է առաջնորդվեին հայկական շահերով: Հասարակությունը միայն այդ պարագայում կարող էր իր ընտրությունը կատարել: Ո՛չ պայմանական ռուսամետները կարողացան համախմբվել, ո՛չ արեւմտամետները, ո՛չ էլ հայաստանակենտրոնները: Դա այս իշխանություններին ձեռնտու է: Այս անլրջությունը փաստացի կասկածի տակ է դնում եթե ոչ ընտրության լեգիտիմությունը, ապա դրա ողջախոհությունը առնվազն: Չեն ստեղծել պայմաններ, որ ընտրողն իր ընտրությունը կատարի ողջամտության սահմաններում: Իսկ դա ամենակարեւորն է այս պահին:

- Իսկ այն ուժերը, որոնք ընդդիմադիր են ներկայանում, սակայն պրոցեսն անլրջացնում են, նպաստում են, որ մարդիկ հնարավորինս պասիվ լինեն ընտրություններում, դա հատո՞ւկ են անում՝ Փաշինյանին աջակցելու համար, թե՞ անկախ իրենցից է ստացվում:

- Կարող եմ ասել, որ դա բացառապես իշխանություններին է ձեռնտու: Կան տարբեր հաշվարկներ: Իշխանական խավն ավելի մոտիվացված է: Նրանք, այսպես թե այնպես, գնալու են ընտրության կամ հավատացել են, որ պատերազմ է լինելու, եթե Փաշինյանը չընտրվի, կամ տարբեր շահեր ունեն իշխանություններից եւ այլն: Ինչքան մասնակիցների թիվը ցածր լինի, այդքան ՔՊ-ի տոկոսն ավելի բարձր է լինելու: 50 տոկոս մասնակցության դեպքում ՔՊ-ն կարող է ստանալ մեծամասնություն, իսկ 70 տոկոսի դեպքում չի կարող: Դրա համար էլ հնարավորինս անլրջացնում են պրոցեսը, որպեսզի մարդիկ մտածեն, թե ընտրությունների արդյունքը կանխորոշված է, բոլորն էլ նույնն են, խեղկատակություն է եւ այլն.... իշխանությունների կողմից սա արվում է գիտակցաբար: Կան նաեւ ուժեր, որոնք դա անում են հայտնի դառնալու համար, ուզում են փորձել իրենց ուժերը, կստացվի՝ կստացվի, չի ստացվի՝ դե, ոչինչ, գուցե պատահաբար 2 տոկոս հավաքեն եւ պետությունից գումար ստանան:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՏԱՆԴԱՐՏ ԽԱԲԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ, ՈՐ 30-40 ՏԱՐԻ ԱՅԴ ԵՐԿՐՆԵՐԻՆ ԱՍՈՒՄ ԵՆ՝ ՎՐԱՍՏԱՆ, ՍԵՐԲԻԱ, ՈՒԿՐԱԻՆԱ, ՀԻՄԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

*«Հրապարակի» զրուցակիցը դիվանագետ, արտակարգ եւ լիազոր դեսպան **Վարդան Հակոբյանն** է:*



- Եվրոպական երկրների առաջնորդները Հայաստանում են, Մակրոնն ասում է, որ Փաշինյանի որոշումների շնորհիվ այլեւս մեր երկիրը Ռուսաստանի ազդեցության տակ չէ, Եվրոպական խորհրդի նախագահ Անտոնիո Կոշտան հայտարարում է, թե Հայաստանը Եվրամիության մասնիկը դառնալու ճանապարհին է: Հիմա մենք գնում ենք եվրոպականացման ուղիով:

- Մի քանի մակարդակով կարելի է դիտարկել Երեւանում տեղի ունեցողը: Առաջինը՝ աշխարհաքաղաքական, որ դա արեւմտյան լիբերալ-գլոբալիստների՝ արդեն 30 տարի գոյություն ունեցող հիմնական ծրագրի շարունակությունն է, քայլերից մեկն է՝ շրջապատել Ռուսաստանը, Խորհրդային Միության նախկին հանրապետություններին օգտագործել Ռուսաստանի դեմ, թուլացնել Ռուսաստանը, հասնել Ռուսաստանում իշխանափոխության եւ դարձնել այն, ըստ էության, Եվրոպայի էներգետիկ կցորդ: Սա է գլխավոր նպատակը, որ արդեն 35, 36 տարի է՝ այդ ծրագիրն իրականացնում են: Քանի անգամ գունավոր հեղափոխություններ թե՛ Հայաստանում, թե՛ Վրաստանում, թե՛ Մոլդովայում, Ուկրաինայում, թե՛ փորձեր Բելառուսում, Ուզբեկստանում, Ղազախստանում: Եվ պատահական չէր, որ Չեխիայի վարչապետն ասաց, որ իրենց՝ Չեխիայի ԱԳՆ-ից նոտագրություն կա, որ աշխատեք ազդել Ղազախստանի եւ էլի ինչ-որ մի հանրապետության վրա, որպեսզի նրանք շատ չխորացնեն իրենց հարաբերությունները Ռուսաստանի եւ Չինաստանի հետ: Այսինքն՝ Ուկրաինայի մասով իրենք համարում են, որ հաջողության են հասել, որոշ առումով՝ այո, 4 տարի է՝ Ռուսաստանը բզկտում են ուկրաինացիների միջոցով, հիմա հերթը Հարավային Կովկասինն է, հետո կանցնեն Միջին Ասիային: Երկրորդը. Հարավային Կովկասում Վրաստանը մի պահ կամ ամբողջովին անցել էր իրենց ազդեցության տակ, իշխանափոխությունից հետո կարծես թե Վրաստանը մի քիչ հետ է քաշվել այդ ծրագրերից, բայց հիմա նորից ակտիվացնում են, ներգրավում են նաեւ Հայաստանը, որը համարում էին ավանդաբար պրոռուսական: Դրա համար էլ 2018 թվականին գունավոր հեղափոխություն արեցին, այս իմքայլականներին բերեցին դրեցին ու նորից համառորեն հակառուսական գիծն են վարում: Ինչ-որ մի ձեւով ներքաշում են այդ հակառուսականության մեջ նաեւ Ադրբեջանին: Եվ երրորդը. լոկալ եթե դիտարկենք, սրանք եկել են այստեղ «վեչերինկա» անելու, դե, գիտեք, ամեն հանդիպելուց իրար համբուրում են, իրար շոյում են եւ այլն, լավ ընթրիքներ կանեն եւ կօգնեն ՔՊ-ականներին՝ ապագա ընտրություններում հաղթել:

- Բայց եվրոպացիները հայտարարում են, որ, ընդհակառակը, իրենք պայքարում են հիբրիդային պատերազմների, դրսից ազդեցությունների դեմ:

- Նրանք հայտարարում են, որ եկել են Հայաստանում հիբրիդային հարձակումների դեմն առնելու, բայց Հայաստանում իրենք են իրականացնում հիբրիդային հարձակում Հայաստանի վրա եւ այս ամեն ինչն օգտագործում են որպես քարոզչություն: Դրսի հայեր կան, որ ելույթ են ունենում, խոսում են դեմոկրատիայից, հակառուսական եւ այլն, դա տարածում են ժողովրդի մեջ, այդ ամեն ինչը պատրաստություններ են ընտրություններից առաջ: Այսինքն, քարտ-բլանշ են ստացել, որ ընտրություններին ինչ ուզենան, ինչ լծակ ուզենան, օգտագործեն ՔՊ-ականները, Նիկոլ Փաշինյանը, միայն թե մնան իշխանության:

- Կոշտան ասում է, որ Հայաստանն ավելի մոտ է դառնում Եվրամիությանը: Հայաստանին դնում են Եվրոպայի սրտում... Հավատո՞ւմ եք:

- Դրանք, գիտեք, ստանդարտ խաբեություններ են, որ այս 30-40 տարին բոլոր այդ երկրներին ասում են՝ Վրաստան, Սերբիա, հենց նույն Ուկրաինա, դե թող ներգրավեն: Նման հայտարարություններ են անում, որ Փաշինյանը նախընտրական քարոզարշավի ժամանակ ասի՝ վերջ, տեսեք, մենք Եվրոպա ենք, հիշո՞ւմ եք՝ Ուկրաինան Եվրոպա է, հիմա էլ սա կասի՝ Հայաստանը Եվրոպա է: Հետագայում, եթե հաջողվի Արեւմուտքին, Հարավային Կովկասում կբացվի նոր ճակատ Ռուսաստանի դեմ, եւ կասեն՝ մինչեւ վերջին հայը կամ վերջին վրացին պետք է պայքարեն ռուսների դեմ: Կոշտայի ասածները եւ այլն, իրենք արդեն այն վիճակում են, որ ռեցեսիայի են հասնում, հիմա եկել են, դեմոկրատիա են խաղում, մեզ էլ հրահրում են Ռուսաստանի դեմ:

- Կարծում եք, որ հաջորդ քայլը լինելու է Հայաստանը որպես Ռուսաստանի դեմ ռազմական միջամտության գործիք կիրառելը, ո՞նց եք դա պատկերացնում:

- Դա նրանց նպատակն է, ուրիշ բան, որ մենք կարող ենք դրան չգնալ, թույլ չտալ, վերջապես՝ ժողովուրդն էլ ուղեղն աշխատեցնի, հասկանա, որ իրենց օգտագործում են որպես գործիք՝ Ռուսաստանի դեմ գործելու համար: Նրանց նպատակն է դա՝ ամեն ինչ անել, Ռուսաստանն այդ ամբողջ սահմանագծով շրջափակել եւ ՌԴ-ին խեղդել այդ օղակի մեջ:

- Իսկ ռուսների արձագանքն ինչպիսի՞ն կլինի՝ Զելենսկի, Տիխանովսկայա եւ մյուս եվրոպացի առաջնորդների հայտարարություններին:

- Արդեն քանի տարի է՝ տանում են եւ ինչպե՞ս պատասխանեցին՝ Ուկրաինայում պատասխանեցին ռազմական օպերացիայով, հիմա պատերազմ է գնում: Եթե այս ճակատում էլ սրվի, նույնն այստեղ կսկսվի: Հիմա ռուսներն ամեն կերպ փորձում են այդ ամենը թույլ չտալ, բայց հիմա գնում է դրան, եւ, վաղ թե ուշ, դրա դեմ որոշակի քայլեր կձեռնարկեն ոչ միայն ռուսները, այլեւ ուրիշ երկրներ: Այս արեւմտաեվրոպացիները, հատկապես Թրամփի հետ հարաբերությունները վատանալուց հետո՝ Մակրոն, Մերց, դրանք՝ բոլորն իրենց երկրներում արդեն անցած էտապ են, բայց իրենց այդ բոնապարտիզմը թվում է անուղեղություն, բայց դրա տակ ոչ թե անուղեղությունն է, այլ թելադրանքը իրենց բերողների, ինչպես իրենք Հայաստանում, Մոլդովայում են բերել-դրել իշխանություն, նույն թելադրանքն են անում: Դրա համար նույն ֆրանսիացու կամ գերմանացու համար այդ ամենն անտրամաբանական է թվում, եւ ներքին ընդվզում է հասունանում, որովհետեւ հնարավոր չէ հանդուրժել այդ ամենը: Այնպես որ, սա ճանապարհ է, հենց հայտարարություններով պետք է տարվի: Կոշտային ասել են, ինքն էլ հայտարարում է, ինքն իրենից ի՞նչ է ներկայացնում: Այդ հայտարարություններն ուղղված են շարքային հայի գիտակցությունը մանիպուլացնելուն: Նույնն արեցին Մոլդովայում՝ ընտրություններից առաջ, այլ երկրներում, որ մարդկանց աչքերին ծուխ փչեն եւ օգտագործեն: Միշտ էլ այդ խոշոր պատերազմները, դիմակայուն պրոցեսները, երբ որ մրցակցությունը հասնում է այն աստիճանին, որ պարզվում է՝ իրենք այդ ուժը չունեն, փորձում են այս միջոցներով հասնել իրենց ուզածին: Շարքային հային էլ դժվար չէ համոզել, ինչ-որ բան բաժանել, բայց հետո, եթե իրենք իրենց նպատակներին հասնեն, արդեն ուշ կլինի, ինչպես հիմա են ուշացած հասկացել, թե ում բերեցին իշխանության, ում էին գովերգում Հայաստանում: Հիմա՝ մի ժամանակ էլ կգա, որ ուշացած կհասկանան, թե եվրոպացիք իրենց գլխին ինչ են բերել:

Հայկա ԱԼՈՅԱՆ

1000 ԽՈՇՈՐ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ՝ ԱՆՀԱՅՏ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ոտ մեկուկես տասնամյակ առաջ Իջեւանում զրույց ունեցա Տավուշի մարզային հարկային տեսչության պետի հետ, որը ծագումով տավուշցի չէ: Զրույցը հավաքագրվող հարկերի մասին էր, նա ասաց. «Մի քանի մարզում հարկայինի պետ եմ աշխատել, սակայն Հայաստանում Տավուշի նման աղքատ մարզ չեմ տեսել»: Խնդրեցի բացատրել, թե իր կարծիքով ինչու է Տավուշը մարզերի մեջ ամենաաղքատը: Բացատրեց, որ Տավուշում հանքարդյունահանող, բազմաթիվ աշխատատեղեր ապահովող, մեծ հարկեր մուծող ձեռնարկություններ չկան, սննդի վերամշակման գործարանները քիչ են, Տավուշի հիմնական հարստությունն անտառն է, որն էլ պետության սեփականությունն է:

Այդ զրույցը հիշեցի, երբ ծանոթացա Պետական եկամուտների կոմիտեի՝ օրերս հրապարակած 2026 թվականի հունվար-մարտ ամիսների 1000 խոշոր հարկատուների ցուցակին: Այդ ցանկում հիմնականում Երեւանում, Երեւանի շուրջ, Արարատյան դաշտում գործող ընկերություններ են, նաեւ՝ հանքարդյունահանող ձեռնարկություններ: Սա փաստում է Հայաստանի տարածքների՝ Երեւանի եւ մարզերի տնտեսական անհամաչափ զարգացման մասին:

Ինձ հետաքրքրեց, թե Տավուշի մարզից քանի ընկերություն է ընդգրկված 1000 խոշոր հարկատուների ցուցակում: Պարզվեց՝ Տավուշից 7 ընկերություն կա: Ցուցակի 351-րդ տեղը զբաղեցնում է «Իջեւանի գինու-կոնյակի գործարան» ՓԲԸ-ն: 676-րդ տեղում Բերդ համայնքում արտադրական ձեռնոցներ արտադրող «Տավուշ տեքստիլ» ընկերությունն է: 1000 խոշոր հարկատուների ցանկի 731-րդ տեղում Դիլիջան քաղաքում շինարարական գործունեություն ծավալող «Սթրաքթ» ՓԲԸ-ն է: Ցուցակի 854-րդ տեղում «Մեր Հարությունյանն» է, իսկ 855-րդ տեղում՝ Դիլիջանի միջազգային դպրոցը: 885-րդը Դիլիջանում գարեջուր արտադրող «Հ եւ Տ Հակոբյաններ» ընկերությունն է: 963-րդ տեղը զբաղեցրել է «Արվա պրոֆ» ընկերությունը: Համացանցում որոնումով պարզեցի, որ «Արվա պրոֆ»-ը սանիտարահիգիենիկ ապրանքներ ներմուծող ընկերություն է, որի՝ որպես գործունեության հասցե նշված է Մասիս քաղաքը: Համացանցում տեղեկություններ չգտա «Մեր Հարությանյանի» գործունեության մասին:

Այսինքն, 1000 խոշոր հարկատուների թվում Տավուշի մարզից ընկերություններ կան, որոնց մասին Տավուշում ոչինչ չգիտեն: Սրանից 4 տարի առաջ՝ 2022 թվականի հունվար-սեպտեմբերին, ՊԵԿ տեղեկատվությամբ՝ 1000 խոշոր հարկ վճարողների մեջ 6 ընկերություն էր ընդամենը Տավուշի մարզից: 2022 թվականի այդ ցուցակի 322-րդ տեղը զբաղեցրել է «Դենիզ»-ը, 579-րդ տեղը՝ Իջեւանի գինու, կոնյակի գործարանը, 587-րդը՝ «Տավուշ տեքստիլը», 733-րդը՝ «Դիլիջան Ինտերնեյշնլ Սքուլ օֆ Արմենիա»-ն, 836-րդ տեղում «Փոենի»-ն էր, 970-ում՝ «Դիլիջան» առողջարանը: Համացանցում «Դենիզ» եւ «Փոենի» ընկերությունների մասին տեղեկություններ չկարողացա գտնել: Այլ աղբյուրից պարզեցի, որ «Դենիզ» ընկերությունը զբաղվում է արտաքին առեւտրով, իսկ «Փոենի»-ն Երեւանում շենքեր է կառուցում: Թե ինչու են «Դենիզ» եւ «Փոենի» ընկերություններն իրավաբանական գրանցում ստացել սահմանամերձ Տավուշի մարզում, պարզ չէ: Հավանաբար՝ որպեսզի օգտվեն սահմանամերձ տարածքներում գործող ընկերություններին տրվող հարկային արտոնություններից:

Ամփոփելով արձանագրենք, որ անցած 4 տարում հանրապետության 1000 խոշոր հարկատուների ցուցակում Տավուշի մարզում գրանցված ընկերություններից իրենց տեղը պահպանել են միայն Իջեւանի գինու-կոնյակի գործարանը, «Տավուշ տեքստիլը» եւ Դիլիջանի միջազգային դպրոցը, որի հիմնադիրը Բաքվի բանտում գտնվող Ռուբեն Վարդանյանն է, եւ որի հետ կնքված որոշ պայմանագրեր խզելու համար Հայաստանը մի շարք հայցերով դիմել է դատարան:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԳ

ՄԱԿՐՈՆԸ, ՀԱՎԱՆԱԲԱՐ, ՄՏԱԾՈՒՄ Է, ԹԵ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏ ՉԿԱ, ԿԱՄ ԷԼ ՀԱՅԵՐԸ ՏԱՌԱՃԱՆԱՉ ՉԵՆ

Երեւանում կայացած ԵՄ 8-րդ գագաթնաժողովի հիմնական արդյունքը Նիկոլ Փաշինյանի կողմից իբրեւ թե վարվող հավասարակշռված եւ հավասարակշռման արտաքին քաղաքականության ոչնչացումն էր, փաստացի զրոյացումը: Այդ քաղաքականությունը համարվում էր նաեւ ՔՊ-ի 2026 թ. նախընտրական ծրագրի արտաքին քաղաքականության հիմնական դոկտրինը: Գրում ենք անցյալ ժամանակով, քանի որ ոչ թե ընտրություններից հետո, այլ արդեն նախընտրական շրջանում այդ կարգախոսը կորցրեց իր արդիականությունը, դարձավ առոչինչ, անիրականանալի: Այդ քաղաքականությունը փաստացի նախկին իշխանությունների վարած կոմպլեմենտարիզմի կամ «եւ-եւ»-ի նոր փաթեթավորումն էր, որի իմաստը բոլոր հարեւան եւ ոչ հարեւան երկրների հետ լավ հարաբերություններ հաստատելն է, կարճ ասած՝ մենք ոչ մեկին թշնամի չենք համարում, ոչ մեկի հետ թշնամանալու ցանկություն չունենք, ուզում ենք ապրել խաղաղ եւ անվտանգ: Առաջին հայացքից հրաշալի է հնչում, բայց գործնականում հնարավոր չէ իրականացնել: Երբ երկրներն իրար հետ բացահայտ պատերազմում են, դու չես կարող դիտորդի դերում մնալ, չես կարող քեզ չեզոք հռչակել, կողմերից մեկն անպայման քեզ իր կողմը կքաշի, եթե նույնիսկ չես էլ ուզում: ԵՔՀ համաժողովի արդյունքում Հայաստանը փաստացի անցավ Ռուսաստանի հակառակորդների ճամբարը եւ պատերազմի մեջ մտավ Ռուսաստանի դեմ: Այս համաժողովը Հայաստանին թրաֆիքինգի ենթարկելու վերջին արարն էր:

Հայաստանի՝ Ռուսաստանի թշնամիների ճամբարն անցնելու մեկնարկը տրվեց ԵՔՀ համաժողովից 1 օր առաջ, երբ Հայաստանի ԱԺ նախագահի պաշտոնում աշխատող Ալեն Սիմոնյանը հայտարարեց, որ Ռուսաստանի իշխանությունները փորձում են Հայաստանում պետական հեղաշրջում իրականացնել, որի նպատակը Հայաստանը ռուսական գուբերնիա դարձնելն է, որ այն, ինչ Ռուսաստանն անում է Ուկրաինայում հատուկ ռազմական գործողության միջոցով, այստեղ ուզում է անել ընտրությունների անվան տակ՝ օգտվելով նրանից, որ Հայաստանում կան քաղաքացիական ազատություններ՝ ազատ մամուլ եւ սոցցանցեր: Սիմոնյանը խոստացավ՝ իրենք թույլ չեն տա, որ Ռուսաստանը հասնի իր նպատակին: Հայաստանում պետական հեղաշրջման փորձի մեղադրանքն առաջին անգամ ուղղված էր ոչ թե Ռուսաստանում գործող ինչ-որ անհասցե եւ անանուն մարդկանց կամ խմբերի, այլ հենց Ռուսաստան պետությանը եւ իշխանությանը: Սրանով Ալեն Սիմոնյանը պաշտոնապես՝ Հայաստանի անունից հայտարարեց, որ Հայաստանն իրեն համարում է պատերազմի մեջ Ռուսաստանի հետ, որ Ռուսաստանի նպատակը Հայաստանը զավթելն ու իրեն միացնելն է: Չէ՞ որ գուբերնիա կամ նահանգ այլ կերպ հնարավոր չէ դարձնել, իսկ Հայաստանի իշխանությունն իբրեւ թե պայքարում է դրա դեմ:

Եվրոպացիներն էլ, գալով Հայաստան, խփեցին Ռուսաստանին հայտարարված պատերազմի կնիքը՝ Հայաստանի անունից հայտարարելով, որ ընտրությունը կատարված է, որ Արեւմուտքը գրավել է Հայաստանը Ռուսաստանից: Այդ իմաստով հատկանշական է Ֆրանսիայի նախագահ Մակրոնի համեմատությունը. նա Հայաստանը համեմատեց Վենեսուելայի եւ Սիրիայի հետ, որոնք, լինելով Ռուսաստանին դաշնակից երկրներ, ՌԴ դաշնակից իշխանությունների հեռացման արդյունքում հայտնվեցին արեւմտյան ազդեցության գոտում: Մակրոնը ելույթ ունենալով Հայաստանում՝ Ռուսաստանին հռչակեց թույլ եւ անվստահելի դաշնակից, դրանով բացատրելով Հայաստանի ընտրությունը. «Հայաստանն իսկապես կատարել է իր աշխարհաքաղաքական մեծամասնության ընտրությունը՝ հաղթահարելու այդ սահմանափակումը եւ դեմքով շրջվելու դեպի Եվրոպա: Լեռնային Ղարաբաղի պատճառով Ադրբեջանի հետ 2020 թ. պատերազմը սարսափելի էր շատ ընտանիքների համար, գուցե ձեզնից ոմանց համար... Բայց եկեք սթափ նայենք դրան: Ո՞վ էր այնտեղ՝ Հայաստանի կողքին: Ֆրանսիան՝ որքանով որ հնարավոր էր: Բայց, վստահեցնում եմ ձեզ, Ռուսաստանն այնտեղ չէր: Ավելին չէր, քան այն ժամանակ, երբ Վենեսուելան խնդիրներ ուներ կամ Սիրիայի՝ իր պատմական դաշնակիցների դեպքում: Մենք դրանում նորից համոզվեցինք Իրանի օրինակով կամ Մալիի վարչակարգի օրինակով, երբ նրան դիմակայում են ահաբեկիչները: Ինչպես տեսնում եք աշխարհաքաղաքական համատեքստից, ավելի լավ է Ռուսաստանի կարիքը շատ չունենալ»:

Սա ասում է մի երկրի ղեկավար, որը տասնամյակներ շարունակ «քցել» է իր հույսին մնացած երկրների իշխանություններին՝ Հարավ-արեւելյան Ասիայի եւ Աֆրիկայի երկրներում, որտեղ ֆրանսիացիներին վերաբերվում են որպես գաղութարարների, իսկ նրանցից ազատագրումը՝ համարում ազգային տոն: Սա ասում է մի երկրի ղեկավար, որին Լիբանանի ժողովուրդը մինչեւ վերջերս համարում էր բարեկամ եւ դաշնակից, բայց Ֆրանսիան մատը մատին չտվեց Լիբանանում արյունահեղությունը կանխելու, տնտեսական եւ սոցիալական քաոսից ազատելու ուղղությամբ, բավարարվեց ընդամենը ինչ-որ հայտարարություններով: Մակրոնը, հավանաբար, մտածում է, որ Հայաստանում ինտերնետ չկա, կամ էլ հայերը տառաճանաչ չեն, որ կարողանան կարդալ եւ տեղեկացված լինել:

Ինչպես ասում են, ամեն ծառայություն ունի իր գինը: Փաշինյանն իր իշխանությունը պահելու համար ստիպված էր դիմել եվրոպական քաղաքական համայնքին, խնդրել, որ նրանք ընտրություններից մեկ ամիս առաջ գան Հայաստան եւ իրենց աջակցությունը հայտնեն իրեն, եվրոպացիները եկան եւ ասացին, որ աջակցում են, Ֆրանսիայի նախագահը մի քանի հոգու նույնիսկ Պատվո լեգեոնի շքանշան տվեց: Բայց այդ աջակցության եւ շքանշանների գինը Ռուսաստանին թշնամի հայտարարելն էր, Եվրոպայի կողմից Ռուսաստանի դեմ մղվող պատերազմին միանալը, ինչը եւ Փաշինյանն արեց: Արդյո՞ք սա Հայաստանի եւ հայ հասարակության ընտրությունն է՝ կերեւա խորհրդարանական ընտրությունների արդյունքում:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԵՎՐԱԿԱՊԻԿՈՒԹՅՈՒՆ

Հայ-ռուսական հարաբերություններն իրենց լավագույն ժամանակները չեն ապրում: Իսկ որ ավելի վատ է՝ չեն նկատվում այդ հարաբերությունները կարգավորելու տենդենցներ: Փոխարենը՝ թե՛ Հայաստանի եւ թե՛ Ռուսաստանի կողմից արվում են քայլեր, որոնք ի վերջո կհանգեցնեն բախումների, եթե 2 երկրների ղեկավարները խաչ քաշեն քաղաքական երկխոսության վրա: Փաշինյանի վերջին այցը Մոսկվա կարող էր դրական իմաստով շրջադարձային լինել, եթե չվերածվեր փոխադարձ մեղադրանքների շքերթի եւ հայ-ռուսական կեղտոտ լվացքը փողոց հանելու արարողության: Այդ այցի հայաստանյան արձագանքները, թե՝ տեսա՞ք Պուտինը ոնց շշպռեց, բա Նիկոլը՝ մալադեց Նիկոլ, տեսա՞ք ոնց չափալախ հասցրեց, մեղմ ասած, բավականին ճիշտ էին բնութագրում Փաշինյան-Պուտին չստացված երկխոսությունը:

Երեւանում անցկացված Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովը, իմ կարծիքով, էլ ավելի մթագնեց հայ-ռուսական հարաբերությունների ապագան: Դա ոչ այլ ինչ էր, քան հակառուսականության բացահայտ դրսեւորում Հայաստանի կողմից: Ի՞նչ է նշանակում՝ գլխիդ հավաքես Ռուսաստանի դեմ բացահայտ պատերազմող երկրների ղեկավարներին ու մի բան էլ դրդես նրանց, որ քո հողի վրա հանդես գան հակառուսական հայտարարություններով: Ի՞նչ արժեր միայն Զելենսկի խաղացնելը, եւ ի՞նչ հետեւանքներ կարող է դա ունենալ Հայաստանի համար: Նման բան կարող են իրենց թույլ տալ ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Լեհաստանը, Բրյուսելը, Բաքուն... Բայց Երեւա՞նը: Դժվա՞ր էր հասկանալ, որ Հայաստանը դրանից հետո հայտնվելու է Ռուսաստանի հանդեպ թշնամաբար տրամադրված երկրների շարքում:

Այն, ինչ տեղի ունեցավ՝ 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանին առաջինը շնորհավորած Զելենսկի խաղացնելը, Արցախն Ադրբեջանի մաս ճանաչած Մակրոն մեծարելը եւ այլն, միով բանիվ, սովորական նիկոլություններ են, որ գրեթե զրոյացնում են Հայաստանի առանց այն էլ ցածր միջազգային վարկանիշը: Աշխարհում ոչ ոք քեզ լուրջ չի ընդունի, եթե դու քո երկրի անկախությունն ես ռիսկի ենթարկում՝ հակառակորդ բեւեռների միջեւ (ի վնաս նրանցից մեկի) հարմարավետ տեղավորվելու համար: Չի լինում այդպես, դա կոմպլեմենտար քաղաքականություն չէ, դա ինքնաոչնչացման ճանապարհի սկիզբն է: Ու երբ գնում ես այդ ճանապարհով, պետք է միշտ պատրաստ լինես, որ մի երրորդ կողմ հարմար պահի թաթը կդնի վրադ ու... Վերջ անկախությանդ: Ալիեւի տիրական խոսքը հեռակապով՝ ինչի՞ մասին էր:

Ասելիք կա նաեւ եվրոպացիներին: Պարոնայք, ինչո՞վ եք առաջնորդվում դուք, երբ Հայաստանի նման երկրներին (Ուկրաինա, Վրաստան, Մոլդովա) փորձում եք ներքաշել Ռուսաստանի հետ ձեր առճակատման մեջ: Հավաքվեք Բրյուսելում եւ սրտներիդ ուզածի չափ առճակատվեք: Դիցուք՝ Հայաստանից ի՞նչ եք ուզում: Հայաստանին ԵՄ չեք ընդունելու, համապատասխան միջոցներ չեք հատկացնելու, որ փոխհատուցվեն Ռուսաստանի հետ կապերը խզելու հետեւանքով առաջացած դժվարությունները, Հայաստան զորք չեք բերելու, եթե, Աստված մի արասցե, պատերազմ լինի, հանուն Ադրբեջանից ունեցած ձեր շահի՝ Սյունիքն անգամ կճանաչեք Ադրբեջանի մաս... Այդպես եղել է միշտ, այդպես կլինի նաեւ այսուհետ: Ժողովրդավարությո՞ւն եք ակնկալում Հայաստանից: Խնդրեմ, պատժեք Հայաստանի հակաժողովրդավար իշխանությանը, ինչո՞ւ եք Հայաստանին պատժում:

Ռուսաստանի արձագանքը եվրոպական կապիկություններին միանգամայն ադեկվատ է: Հասկանալի ու սպասելի էր, որ Ռուսաստանը չէր հաշտվելու իր սահմանների մոտ հակառուսական դեմարշների հետ՝ լինեին քաղաքական, թե տնտեսական: Եվ կոնֆլիկտները, որոնք կան այսօր տարբեր ուղղություններով՝ Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան, Հայաստան, հետեւանք են ԵՄ քաղաքականության: Հանրահայտ իրողություն է, չէ՞, որ ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանը նշված պետությունների հետ որեւէ կոնֆլիկտ չի ունեցել, ավելին՝ օգնել է այդ երկրներին՝ անկախության առաջին քայլերն անելու: Ուրեմն, ինչո՞ւ հանկարծ պատերազմներ ծագեցին: ԵՄ-ն իրեն չի՞ տեսնում այդ պատերազմները հրահրողի դերում, ընդ որում՝ շատ վատ հրահրողի եւ շատ վատ կռվողի: Ո՞վ է մեղավոր, որ Աբխազիան ու Հարավային Օսիան անջատված են Վրաստանից, Ղրիմն ու Դոնբասը՝ Ուկրաինայից, Արցախը՝ Հայաստանից: Մի՞թե Եվրոպայի համար ավելի հեշտ է պատերազմել Ռուսաստանի հետ, քան համագործակցել: Չէ՞ որ հարցերը լուծելու այլ ճանապարհ կա՝ Ռուսաստանի հետ համագործակցելը, ինչը ժամանակին անում էին ԵՄ խելացի ղեկավարները:

Հետխորհրդային տարածքում, ուր ոտք են դրել եվրոպացիները, ծնունդ են առել միայն հակառուսականություն, ռուսաֆոբիա, թշնամանք: Հերթը Հայաստանինն է, որտեղ ԵՄ-ն, ի դեմս ՀՀ անուղեղ իշխանությունների, լուրջ դիրքեր է նվաճել: Ապացույցը եվրակապիկության գագաթնաժողովն էր: Եկել, ընտրություններից մեկ ամիս առաջ մեծարում են Ռուսաստանի դեմ ելած ՀՀ անուղեղ իշխանություններին: Ռուսաստանի ադեկվատ արձագանքը չի ուշանալու, ինչից, սակայն, ո՛չ ԵՄ-ն, ո՛չ ՀՀ անուղեղ իշխանությունը, ո՛չ էլ ՌԴ-ն չեն տուժելու: Տուժելու է հայ ժողովուրդը:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՐԹԻԿ

2024-ԻՆ ՏՐՎԱԾ ՀԱՐՑԻՆ՝ ՁԵՐ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՀԱՐՑ ԿԱ՞, ԳՐԱՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ ԵՆ՝ ՉԿԱ

Արթիկի համայնքապետարանն ապրիլի 23-ին հանրային լսումներ էր կազմակերպել՝ Արթիկ քաղաքի Ազատության հրապարակում գտնվող՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին նվիրված հուշակոթողը Բարեկամության այգի տեղափոխելու չարչրկված նախագծի վերաբերյալ: Մենք տեղեկացանք, որ Արթիկի ԲՊ-ական համայնքապետ Անանիկ Ոսկանյանը, որը գեներալ Մանվել Գրիգորյանի սանիկն է, եւ որի մուտքը ՌԴ 50 տարով արգելվել է, համայնքում 1965 թվականին կառուցված՝ Հայրենական մեծ պատերազմում զոհվածներին նվիրված հուշակոթողը որոշել է ապամոնտաժել եւ տեղափոխել:

ԿԳՄՍՆ-ն եւս այս հարցը 2025 թվականին քննարկման էր դրել: Արթիկի համայնքապետի օգնական **Սեւան Պետոյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ հանրային լսումն անցել է շատ դրական մթնոլորտում, հրավիրված են եղել Արթիկ համայնքում շատ հայտնի անձինք, այդ թվում՝ Արթիկի նախկին քաղաքապետեր Խաչատուր Վարագյանն ու Արսեն Աբրահամյանը, հայտնի նկարիչ Երվանդ Բիչախչյանը, այլք. «Ներկա գտնված բոլոր անձինք միահամուռ դրական որոշում են կայացրել, որ Արթիկ քաղաքի Ազատության հրապարակում գտնվող՝ Հայրենական մեծ պատերազմին նվիրված հուշակոթողը տեղափոխվի Բարեկամության այգի: Ընդ որում, նաեւ տրվել են հիմնավորումներ՝ հուշապատի արտաքին տեսքի, հուշապատի տեղափոխման անհրաժեշտության հետ կապված, որը, ինչպես ժամանակին կառուցվել է, հիմա արդեն չի համապատասխանում ներկա ճարտարապետական եւ նկարչական լուծումներին: Արթիկի նախկին քաղաքապետեր Խաչատուր Վարագյանը եւ Արսեն Աբրահամյանը հայտնի նկարիչ Երվանդ Բիչախչյանը համյանն ասել են, որ իրենք նույնպես իրենց կառավարման տարիներին կողմ են եղել հուշապատի տեղափոխմանը, հարցը բարձրացրել են, բայց ֆինանսների բացակայության պատճառով եւ ելնելով այլ հանգամանքներից՝ չեն կարողացել այն իրականացնել: Նախկինում քաղաքային խորհրդի դեպուտատ Յուրի Սահակյանը եւ Սուրիկ Սահակյանն ասել են, որ դեռեւս 1993 թվականին է այդ հարցը քննարկվել: Սուրիկ Սահակյանը մասնակից է եղել հուշարձանի կառուցման աշխատանքներին, նրա հայրը եղել է հուշապատի կառուցման աշխատանքների ճարտարապետական խմբի անդամ, իրենք դեռեւս 1965 թվականին չեն ցանկացել, որ այդտեղ հուշապատ կառուցվի: Ուղղակի այն ժամանակ չեն կարողացել այդ ամեն ինչին դեմ գնալ, իսկ 1993 թվականին Արթիկի քաղաքային խորհրդի ձեւավորման ժամանակ հարցը բարձրացվել է, սակայն մերժվել է, որովհետեւ այն ժամանակ դեռեւս կենդանի են եղել Հայրենական պատերազմի մասնակից մարդիկ, եւ ժողովրդի ռեակցիան բացասական է եղել, իսկ հիմա բոլորը միահամուռ կողմ են արտահայտվել»:

«Հուշապատն իր ծավալով մեծ է, հրապարակը շատ փոքր է: Հարակից շենքերը բարձր են, կարծես թե հուշարձանին ճնշում են: Այն կողքերից դիտման կետ չունի, դեմը փողոց է, մարդը չի կարող այդտեղից կանգնել ու նայել: Բարելյեֆը սկիզբ ու վերջ պետք է ունենար, եկել հասել է մեջտեղը, ու չեն շարունակել: Թե ինչի համար է կիսատ մնացել, պատճառաբանել են, որ այդ ժամանակ ֆինանսավորում չի եղել»,- մեզ հետ զրույցում ասաց նկարիչ **Երվանդ Բիչախչյանը**, ապա հավելեց. «Հետեւի մասում՝ մարմարի վրա գրված տառերը սկզբից շատ գեղեցիկ էին նայվում, հետագայում, երբ մարմարը կեղտոտվել է, ինչ-որ մեկը, առանց մտածելու, բրոնզով ներկել է տառերը, շատ տգեղ բան է ստացվել: Արեւի տակ տառերը քայքայվել են, քարերից մեկն էլ անձրեւներից պոկվել, ցած է ընկել, չգիտեմ՝ հիմա ուր է այդ քարը, մոտ 40-50 անուն է ամեն քարի վրա գրված: Հուշարձանը պետք է անմար կրակ ունենար՝ չկա: Ես՝ որպես նկարիչ, մտածում եմ, որ հուշարձանը կարելի է տեղափոխել Բարեկամության այգի, այնտեղ մեծ տարածություն կա, դիտման կետ կա: Եթե, իհարկե, ամբողջ տարածքը ձեւավորվի, տեղը ճիշտ ճարտարապետորեն ընտրվի, հետո նոր՝ տեղափոխման հարցը լուծվի, էնպես չլինի, որ տեղափոխման հարցը լուծեն, հետո քանդեն ժողովրդի աչքի առաջ: Տեղ պետք է պատրաստեն եւ գործողությունն անմիջապես անեն, որ մարդիկ համոզված լինեն դրա լավ լինելու մեջ»:

Երվանդ Բիչախչյանից հետաքրքրվեցինք, թե հանրային քննարկման ժամանակ ներկայացրել են՝ ինչ են անելու, ինչպես են ուզում տեղափոխել, տեղափոխման հետ կապված հարցեր քննարկվել են: «Ես այդ հարցն իրենց տվել եմ, որ դուք այդ տեղը պետք է ընտրեք, պատրաստեք, հետո նոր տեղափոխեք, էնպես չլինի, որ քանդեք, տանեք, քարերը լցնեք մարդկանց աչքի առաջ. դա մի ահավոր սխալ բան կստացվի: Մենք լավ ճարտարապետ ունենք, խորհուրդ տվեցի, որ այդ ճարտարապետի հետ էլ խոսեն, հետո նոր գործողություն կատարեն, առանց դրա գործողություն չկատարեն, ոչ մի քանդել, ոչ մի բան»:

Այս հարցը բազմիցս բարձրաձայնել է ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր **Միեր Մելքոնյանը**: Մեզ հետ զրույցում նա ասաց, թե տեղյակ չի եղել՝ նախկին համայնքապետերի ժամանակ քննարկվել է այդ հարցը, բայց որ այս համայնքապետի օրոք հարցին գաղտնի ձեւով ուզում էին լուծում տալ, հաստատ է. «Սկզբից ամեն ինչ գաղտնի են պահել: Ես 2024 թվականին գրավոր հարցում եմ արել համայնքապետին՝ Ձեր օրակարգում հուշարձանի տեղափոխման հարց կա՞: Իրենք ինձ գրավոր պատասխանել են, որ այդպիսի հարց համայնքապետարանում չունեն: Ես պարզեցի, որ 2023 թվականին նախագիծ-նախահաշվային աշխատանքների համար արդեն պայմանագիր էին կնքել: Ես միշտ էլ դեմ եմ արտահայտվել հուշարձանի տեղափոխմանը՝ մի քանի պատճառով: Նախ, հիմա շատ բարդ աշխարհաքաղաքական իրավիճակ է Հայաստանում, ու լավ իմանալով ռուսների տրամադրվածությունը նման քայլերի վերաբերյալ, այս իրավիճակում փորձում են այդ հուշարձանը տեղափոխել: Դա արթիկցիների հուշարձանն է, միայն ու միայն արթիկցին է որոշում դա: Քարերի վրա անուններ կան, որոնք որդիներ, թոռներ ունեն, մարդիկ գնացել՝ կյանք են տվել հայրենիքի համար: Եթե քաղաքի համար լավ բան են ուզում անել, հուշարձանը թող մնա իր տեղում, թող բարեկարգվի տարածքը, շատրվանը թող տանեն դնեն Բարեկամության այգում: Մարդիկ այնքան սոցիալ-տնտեսական խնդիրներ ունեն, որ այս պահին հուշարձանի հարցով զբաղվելն ուղղակի խեղկատակություն է: Իսկ գիտե՞ք, թե որն է զավեշտը. այս հարցը ԿԳՄՍՆ-ի հանձնաժողովում քննարկվել է, մի հոգի հանձնաժողովի անդամներից հարց է տալիս, թե ինչու եք ուզում տեղափոխել: Հիմա լսեք, թե ինչ պատասխան է ինչել. «Արթիկի գլխավոր հրապարակի հուշարձանը, որտեղ զոհվածների անուններով քարեր կան, քարը հրապարակին ավելի տխուր տեսք է տալիս»: Սրանք ոչ թե ուզում են տեղափոխել, այլ ոչնչացնել այս հուշակոթողը: Մի բան էլ ասեմ. ԿԳՄՍՆ-ի տրամադրած էսքիզի համաձայն՝ այս հուշարձանը ոչ թե պետք է տեղափոխվի Բարեկամության այգի, այլ՝ Անկախության 3/5 հասցե»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԾԱԳԵՑ

Այս օրերին ականատես եղանք Ադրբեջանի եւ Եվրամիության միջեւ հարաբերությունների հերթական լարմանը: Առհասարակ, այս առումով, եվրոպացի պաշտոնյաներից հաճախ կարելի էր լսել, որ Ադրբեջանն օգնում է Եվրամիության էներգետիկ դիվերսիֆիկացիային եւ ռուսական էներգակիրներից կախվածությունից ազատագրվելուն: Բաքուն էլ դրանից լավ առիթավորվում էր: Սակայն պարզվում է, որ այդ հարաբերություններն այնքան անամպ չեն, որքան թվում է, եւ որքան կարող էին լինել, ասենք, եթե Ադրբեջանում Նիկոլ Փաշինյանի նման նախագահ ունենային, եւ մենք ականատեսն ենք լարվածության հերթական փուլին:

Ընդ որում, խոսքը ոչ թե ԵՄ գործադիր իշխանության՝ Եվրահանձնաժողովի եւ դրան ենթակա կառույցների հետ է կապված, այլ՝ Եվրախորհրդարանի: Ադրբեջանի եւ ԵՄ խորհրդարանի հարաբերությունները միշտ են բարդ եղել, ու հաճախակի նաեւ ճգնաժամային իրավիճակներ են ծագել, ի տարբերություն, օրինակ, Ադրբեջանի եւ Եվրահանձնաժողովի հարաբերությունների, որոնք կարծես բավական լավ վիճակում են:

Այս անգամ լարվածությունն անհամեմատ մեծ է՝ այնքան, որ մայիսի 1-ից Ադրբեջանի խորհրդարանի եւ Եվրախորհրդարանի միջեւ հարաբերությունները Բաքվի նախաձեռնությամբ սառեցվել են: Առհասարակ, եթե նայենք ոչ հեռու անցյալի պատմությանը, ապա, 1990-ականներից սկսած, Ադրբեջանի թեման՝ մարդու իրավունքների, քաղաքական ազատությունների, ընտրությունների որակի եւ այլ համատեքստերի հետ կապված, հաճախ է քննարկվել Եվրախորհրդարանի պատերի ներսում, ինչպես նշում է քաղաքագետ Սերգեյ Մարկեդոնովը: Այս տարիներին ընդունվել են բանաձեւեր, որոնք բոլորովին Բաքվի սրտով չեն եղել: Եվրախորհրդարանականներն անընդհատ բարձրաձայնել են քաղբանտարկյալների եւ ադմինիստրատիվ ռեսուրսն ընտրարշավներում օգտագործելու թեմաները: Զուգահեռաբար, նոր խնդիրների ի հայտ գալով, դրանք էլ են ներառվել քննարկումների օրակարգում, ինչպես նաեւ՝ Ղարաբաղի թեման: Ցանկացած նման քննարկում՝ կապված հայ ռազմագերիների հետ կամ այլ, Բաքուն ընկալում է որպես իր ներքին գործերին միջամտության փորձ: Ու հատկապես Ադրբեջանի համար ցավոտ է Ղարաբաղի թեման: Պաշտոնական Բաքուն կարծում է, որ այս հակամարտությունն ավարտվել է՝ ինքը լուծել է Ղարաբաղի եւ ղարաբաղցիների հարցը: Չկա Արցախ՝ չկա Արցախի հարց: Սակայն եվրախորհրդարանականները կարծես այլ կարծիքի են:

Ապրիլի 30-ին «Հայաստանի դեմոկրատական կայունության աջակցման մասին» բանաձեւում Եվրախորհրդարանն արտահայտեց իր աջակցությունը ԼՂ հայերի իրավունքներին՝ ներառյալ նաեւ նրանց ինքնության, սեփականության եւ մշակութային ժառանգության պահպանման թեման, ինչպես նաեւ՝ անվտանգ ու արժանապատվորեն՝ միջազգային երաշխիքների առկայությամբ վերադարձի իրավունքին: «Միասնական Եվրոպայի» պատգամավորները դատապարտեցին Ադրբեջանում հայ ռազմագերիներ եւ պատանդներ պահելը եւ կոչ արեցին անհապաղ նրանց ազատ արձակել: Այստեղ Բաքուն որոշեց մի կողմ դնել քաղաքական կոռեկտությունը եւ նախ բողոքի նոտա հանձնեց Բաքվում ԵՄ ներկայացուցչին, ապա որոշվեց դադարեցնել Ադրբեջանի պառլամենտի եւ Եվրապառլամենտի համագործակցությունը: Սակայն դա, իհարկե, չի նշանակում, թե, ահա, Բաքուն փոխում է իր արտաքին քաղաքական կուրսը: Կարծում ենք, սա լարվածության հերթական փուլն է: Հատկապես որ նման վայրիվերումների փորձ Բաքու-ԵՄ հարաբերություններում՝ նկատի ունենալով համաեվրոպական խորհրդարանը, առկա է:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Քարոզչական նյութերի համար անվճար տեղեր են հատկացրել

Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արսեն Աղաբաբյանն ապրիլի 23-ին որոշել է հունիսի 7-ին կայանալիք ԱԺ հերթական ընտրությունների քարոզչության ժամանակահատվածում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր եւ այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել անվճար տեղեր: Նոյեմբերյան, Այրում քաղաքներում, համայնքի գյուղերում այդպիսի 40 տեղ է որոշվել: Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանն էլ ապրիլի 27-ին է որոշել Իջեւան համայնքի տարածքում առանձնացնել անվճար վահանակներ: «Առանձնացված վահանակների վրա յուրաքանչյուր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար յուրաքանչյուր տեղում հատկացվում է մեկ A4 չափի 21սմ լայնությամբ, 29.7սմ բարձրությամբ տարածք, հորիզոնական դասավորվածությամբ ընդհանուր 0.06237 քմ մակերեսով»: Իջեւան քաղաքում եւ համայնքի գյուղերում նման 24 տեղ է հատկացվել: Բերդ համայնքի ղեկավար Աստղիկ Հակոբյանն ապրիլի 30-ին որոշել է ԱԺ ընտրությունների քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր եւ այլ նյութեր փակցնելու համար համայնքի տարածքում առանձնացնել անվճար վահանակներ: Բերդ քաղաքում եւ համայնքի գյուղերում ընդհանուր 20 տեղ է հատկացվել: Նախկինում հայտնել էինք, որ Դիլիջանի համայնքապետ Դավիթ Սարգսյանն ապրիլի 21-ին որոշել էր քարոզչական պաստառներ փակցնելու համար Դիլիջան համայնքի տարածքում տրամադրել անվճար 26 տեղ, սակայն ապրիլի 28-ին չեղյալ է համարել իր այդ որոշումը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

«ԼԱՎ ՆՎԵՐ» ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆԸ, ՄԵԾ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

«Ոլ ղեղային մորմոք». ուրիշ կերպ չես անվանի նիկոլական գովազդային նոր պաստառը, որն աչքովս ընկավ օրերս՝ վրան գրված. «Առանց Փաշինյանի Հայաստան չկա»: ՔՊ-ական ցինիզմն ու լկտիությունը սահմաններ չունեն: Իրենց ծայրահեղ արարքներով հայոց լեզուն այնքան են «աղքատացրել», որ այլեւս հնարավոր չէ այս արարքը բնութագրող բառ գտնել: Պաստառին գրվածը պարզապես կարգախոս չէ: Եվ դա առաջին դեպքը չէ: Ժամանակին հնչեցրել է. «Եթե ինձ վարչապետ չընտրեք, Հայաստանը վարչապետ չի ունենա»: Այն ժամանակ ոչ ոք չհարցրեց՝ ինչպե՞ս է հնարավոր դա, եւ ի՞նչ է բուն «ասելիքդ»: Չէ՞ որ վարչապետին ընտրում է ժողովուրդը, ոչ թե ի վերուստ նշանակվում է որպես անփոխարինելի գոյանք: Այսօր նույն միտքը ստացել է նոր, ավելի սենսացիոն, ավելի անամոթ ձեւակերպում:

Վարչապետ Նիկոլ, իհարկե, Դուք գիտեք այդ պաստառի մասին: Առանց Ձեր գիտության «օձն իր պորտով, հավքն իր թեւով» Հայաստանի «տարածք» չէր մտնի, ուստի նման բան չէր հայտնվի: Սա ի՞նչ է՝ քաղաքական խոսո՞ւյթ (Ձեր սիրելի բառով), թե՞ բացահայտ շանտաժ: Մարդու իրավունքների սահմանափակո՞ւմ, ընտրողի վրա ճնշո՞ւմ: Վախեցնո՞ւմ եք մարդկանց՝ ասելով, թե առանց Ձեզ պետություն չի լինելու: Եթե այս հարցերին պատասխան չունեք, ապա հանձնարարեք Ձեր իրավապահներին՝ վերծանել այդ խոսքի բուն իմաստը: Թող պարզեն՝ ինչ է իրականում թաքնված այդ ձեւակերպման տակ: Գուցե պարզվի, որ Դուք Ձեզ պատկերացնում եք որպես անփոխարինելի, անմահ ու հավերժական միավոր: Գուցե ավելի՞ն: Իսկ մարդիկ կարծում են՝ Ալիեւ եղբոր հետ պայմանավորվածությունն է նման բարբաջանք թելադրել: Ամեն դեպքում, պետք է իմանայիք՝ պետությունը երբեք չի կարելի նույնացնել մեկ անձի հետ, եւ չի կարող նույնանալ: Դուք նույնացնում եք, բայց չեք զբաղվում պետական ղեկավարին պատվիրակված հիմնական գործառույթներով: Մինչդեռ հարկավոր է գործ անել, ոչ թե «փուչիկներ» փչել:

Հուշենք՝ ինչ անել: Հիշում ենք՝ ամիսներ առաջ Հակակոռուպցիոն կոմիտեն հայտարարեց, որ ընտրակաշառքի ոչ մի դրվագ չի հանդուրժելու: Դա ավելի շատ սպառնալիք էր հիշեցնում, քան վստահություն ներշնչում: Սպասեցինք, թե երբ է կոմիտեն զբաղվելու Փաշինյանով, որը պետական բյուջեն օգտագործելով ոչ միայն ժամանակից շուտ սկսեց նախընտրական պայքարը, այլեւ աջ ու ձախ խոստումներ է բաժանում, օրը ցերեկով ՀՀ Սահմանադրությունն ու օրենքները խախտում: Սպասումը զուր էր: Հետո պարզ դարձավ այն, ինչը վաղուց էր հայտնի. այս երկրում որեւէ պետական կառույց, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեն, չի շարժվի, եթե հրահանգ չիջնի մեկ կենտրոնից, իսկ այդ «կենտրոնը» Դուք եք: Ու քանի դեռ Դուք հրահանգ չեք իջեցնում, պետական կառույցները գործելու կամք չունեն:

Ուրեմն, պարոն վարչապետ, հիշեցրեք Ձեզ ենթակա մարմիններին, որ իրենք գոյություն ունեն ոչ թե հայտարարություններ անելու, այլ գործելու համար՝ առանց վերեւից իջեցված հրահանգների: Թեկուզ ուշացած, բայց սկսեն իրենց գործը: Եթե իրոք հանցագործներ են փնտրում, կարող ենք օգնել: Կաշառքի աղբյուրները, օրենքը խախտողները հեռու չեն՝ կառավարությունում նստած են: Նրանք ընտրություններից առաջ թոշակ են բարձրացնում, թոշակառուներին անվճար բժշկական ծառայություններ են մատուցում՝ քաղաքական դիվիդենտներ հավաքելով: Ձեզ եւ Ձեր թիմակիցներին բաժանում են միլիարդների հասնող պարգեւավճարներ ու հավելավճարներ, աշխատավարձեր են բարձրացնում՝ առանց հիմնավորման: Սրանք ակնհայտ կաշառատվության դրսեւորումներ չե՞ն: Ինչո՞ւ հրաման չեք արձակում, որ այս ամենը քննվի, մեղավորները պատժվեն: Չեք անում: Արդյունքում ստեղծվում է մի վտանգավոր վակուում, մի բաց տարածք, որտեղ Դուք ավելի խորն եք մխրճվում նորանոր հանցանքների մեջ: Բայց փոխարենը այլ քաղաքական ուժերի բացած գրասենյակներն են ներխուժում, օրինական աշխատավարձն անվանում են ընտրակաշառք, 24 ժամ մարդկանց են ձայնագրում, մոնտաժում, կցմցում, գործեր հարուցում՝ սովորական կենցաղային խոսակցություններից կառչելով:

Օրերս Չինչին գնացիք: Ցույց տվեցիք գյուղի ճանապարհը՝ ասֆալտապատված: Բայց ո՞վ է դրա հեղինակը: Գուցե անձնական միջոցների՞ց եք այդ ասֆալտն արել: Անմեղ երեխաներին ստիպում են վանկարկել՝ «Նիկոլ, վարչապետ»: Սա նոր տեխնոլոգիա՞ է, Դուք չգիտե՞ք, որ երեխաներին չի կարելի օգտագործել քարոզչական նպատակներով կամ ներգրավել գովազդի մեջ: Իսկ այդ նույն երեխաները հաջորդ տարի իրենց գյուղում դպրոց չեն ունենալու: Ստիպված են լինելու ավտոբուսով գնալ հարեւան Նավում գյուղի դպրոց կամ էլ արտագաղթելու են գյուղից, եւ մի օր Չինչինն այլեւ նախկին գյուղ է կոչվելու՝ Ձեր իսկ թեթեւ ձեռքով:

Պարզ է, որ այս բոլոր անօրինականությունները Ձեր մշակմամբ, մասնակցությամբ կամ հավանությամբ են արվում եւ անգամ այն, որ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն «պատահաբար» դիմել է իրավապահներին՝ պահանջելով պատասխանատվության ենթարկել «Իմ քայլը» հիմնադրամին՝ 15 կետով բարեգործություն իրականացնելու արգելքը խախտելու համար: Աննա Հակոբյանը 2 ամիս հազիվ դիմացավ կառավարական ամառանոցից դուրս, հիմա վերադարձել է եւ մասնակցում է Ձեր քարոզարշավին՝ հույս ունենալով, որ իր հայտարարությունը՝ ես ինձ ՔՊ-ի հետ չեմ ասոցացնում, բավարար է, որ իրավապահներն էլ չասոցացնեն, եւ ոչ մեկը չասոցացնի: Հետաքրքիր է՝ Դո՞ւք էլ չեք ասոցացնում:

Իսկ ի՞նչ են մտածում մեր ընդդիմադիրները «Առանց Փաշինյանի Հայաստան չկա» կարգախոսի մասին: Չէ՞ որ դա լավագույն հնարավորությունն ու «նվերն» է ընդդիմադիր գործիչներին՝ իրավական, քաղաքական, հանրային դաշտում հանդես գալու, մատնացույց անելու այս խայտառակությունը, հակապետականությունը, որը որդեգրել է ՔՊ-ն: Այժմ պարտադիր է ձեւավորել միասնական ճակատ ու միասնական ճնշում, ներգրավել իրավաբանների, օգտագործել հանրային բոլոր լծակները եւ հասնել կոնկրետ արդյունքի՝ մինչեւ ընտրությունները: Դամոկլյան սուրը կախված է բոլորիս գլխին:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ՀԱՅԵՐԸ՝ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԿԻՆՈՅՈՒՄ. ՄԻ ՔԱՆԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԴԵՄՔԵՐ

Ֆրանսիական կինոարվեստն ավանդաբար համարվում է մշակութային երկխոսության համար պարարտ տարածք, որում կարեւոր նշանակություն ունեն ֆրանսաբնակ տարբեր ազգային համայնքները, այդ թվում՝ նաեւ ֆրանսահայ համայնքը: Այն ձեւավորվել է Հայոց ցեղասպանությունից հետո՝ ցեղասպանությունը վերապրածներից: Ֆրանսահայ համայնքը, ֆրանսիական կյանքի մյուս ոլորտների հետ, նշանակալի ներդրում է ունեցել եւ ունի նաեւ այսօր՝ կինոյում եւս: Ներկայացնենք ազգությամբ հայ այն երեւելի կինոդեմքերին, որոնք իրենց նպաստն են ունեցել ֆրանսիական կինոյում:

Այս շարքը թերեւս չի կարելի սկսել առանց Անրի Վեռնոյի՝ Աշոտ Մալաքյանի: Նրա ինքնակենսագրական գործի հիման վրա նկարահանված «Մայրիկ» եւ «Պարադի փողոց, տուն 588» կինոնկարներն ինքնակենսագրական կինոյի փայլուն օրինակներ են, որոնք պատմում են հայ գաղթականների՝ օտար ափերում ապրած փորձառության մասին: «Մայրիկ»-ում Վեռնոյի մանկական հիշողությունների վերակերտումն է: Կինոնկարը ներկայացնում է հավաքական սփյուռքը, որը փորձում է օտար ափերում պահպանել ազգայինը, ավանդականն ու տրավմատիկ հիշողությունը:

Հաջորդիվ պետք է նշել Ռոբեր Գեդիկյանին, որը ժամանակակից ֆրանսիական կինոյի ամենահայտնի ռեժիսորներից է: Նրան համարում են սոցիալական ռեալիզմի ռեժիսոր (չշփոթել սոցիալիստական ռեալիզմի հետ): Նրա կինոնկարներում թեեւ հայկական թեմատիկան հաճախ ուղղակիորեն արտահայտված չէ, սակայն առկա են սոցիալական հավասարության, միգրացիայի եւ ինքնության մասին սուր հարցադրումներ: Մասնագետները, այս առումով, հատկապես ուշադրության են հրավիրում Գեդիկյանի «մարսելյան շարքին», որտեղ անհատական եւ հավաքական ինքնությունները միահյուսվում են:

Շառլ Ազնավուրը թեեւ ուղղակիորեն կինոյի հետ կապված չէ, սակայն մեծանուն հայորդին եւս հաճախ է նկարահանվել կինոյում, որտեղ հատկապես նշանակալի է «Կրակեք դաշնակահարի վրա» կինոնկարը, որն էկրան է բարձրացել 1960 թվականին. ռեժիսորը Ֆրանսուա Տրյուֆոն է: Մեր օրերում էլ ֆրանսիական կինոյում բազմաթիվ հայազգի դերասաններ, ռեժիսորներ եւ պրոդյուսերներ կան, որոնցից հիշենք Սերժ Ավետիքյանին, որը ճանաչում է ստացել իր կարճամետրաժ կինոնկարների եւ միջազգային նախագծերում մասնակցության շնորհիվ:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԱՐԴԻԿ ԱՎԵԼԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՆ, ՔԱՆ ԻՐԵՆՔ ԵՆ ՄՏԱԾՈՒՄ, ԵՎ ՇԱՏ ԱՎԵԼԻ ԱՆԲԱՐՈ, ՔԱՆ ԿԱՐՈՂ ԵՆ ԵՐԵՎԱԿԱՅԵԼ

Սիմոն ՀԱԿՈԲՅԱՆ
Շարունակելի

Թող ների ինձ ծերուկ Ֆրոյդը՝ «գրագողության» համար. դժվար թե ավելի ճիշտ ու դիպուկ վերնագիր գտնեի՝ ասելիքիս համար: Սուտը, կեղծիքը, երեսպաշտությունը պարզապես խժռում են երկիրը: Էն թվերին կոմունիստներն ասում էին՝ մի ուրվական է շրջում աշխարհում՝ կոմունիզմի ուրվականը: «Կոմունիզմ» անհեթեթությունը փոխարինենք «անբարոյականություն» բառով, եւ ամեն ինչ տեղը կընկնի: Հիշեցի՝ մեկուսեջ ընդդիմադիր խաղացող Էդմոն Մարուքյանը ԱԺ նախագահին անբարոյականի վաստակ անվանեց, եւ թվում էր, թե առնվազն երկրաշարժն անխուսափելի է, բայց... «անբարոյականի վաստակը դո՛ւ ես»,- ախոյանին հակահարված տվեց Ալենը, եւ ասես ոչ մի արտառոց բան չէր եղել, ազգընտիրները շարունակեցին իրենց «մարդակենտրոն» օրենսդրական աշխատանքը:

Ժամանակին Վազգեն Սարգսյանը համոզված հայտարարում էր. «21-րդ դարը մերն է լինելու»: Ոչ պակաս ներշնչումով էլ Մովսես Գորգիսյանն ասում էր. «Կեցցե այն Հայաստանը, որ վաղն է գալու»: Ոչ մեկս չէր կասկածում նրանց սրտաբուխ խոսքին: Ավա՜ղ... 21-րդ դարը «չեկավ» մեզ վրա: Ամեն Աստծո օր մի քար է ընկնում մեր պետության շենքից, ու վերջը չի երեւում: Մեր անտարբեր, անհաղորդ հայացքի ներքո:

Այսօր ամեն երկրորդը խոսում է բարոյական արժեքներից, ինքնությունից ու բարեկրթությունից, եւ մտքով չի անցնում մի պահ նայել հայելու մեջ... Ցույց տվեք մի երկիր, ուր առավոտները բացվեն 1-ին դեմքի սիրո խոստովանությամբ՝ օդային սրտիկներ ու վարակիչ ժպիտներ նվիրելով սիրելի պոդոսներին: Այդ պահերին հուզմունքը խեղդում է կոկորդս, օդը լցվում է վարդագույն երանգներով, ծերացող մկաններս արթնանում են թմբիրից, շուրջբոլորս շնչում է թարմությամբ... «Տարօրինակ» մի խավ էլ կա, որ նրան տեսնելիս ալերգիան «բռնում» է, ճնշումը՝ բարձրանում...

Լրջանամ: Այս մարդու առեղծվածային կերպարից ոչ ոք այդպես էլ գլուխ չհանեց:

- Հալալ ա, ախպեր, դրան,- ավտոբուսում ասաց կողքինս,- բոլորին նստացրեց իրանց տեղները, էսքանից հետո հլա ուզում ա նորից ընտրվի: Երկար լռելուց հետո ավելացրեց. «Ու վախենամ՝ ընտրվի»: Մինչեւ հիմա էլ ինձ համար գլուխկոտրուկ է՝ «էդքանից հետո» նա ինչպես 2021-ին վերընտրվեց: «Մարդիկ շոկի մեջ էին, ընկճված... եսիմ էլի ինչ...», իրենց անկարողությունը չընդունող թուլակամ ընդդիմության անհեթեթ արդարացումները թութակի նման մինչ օրս կրկնում են նաեւ խելացի շատերը: Ախր, ժողովուրդն ինչպե՞ս կարող է իմաստուն լինել (հիշենք Հիսուսի ու Բարաբայի պատմությունը, Սոկրատեսի, Գալիլեյի... ճակատագրերը):

Նա մշտապես ուշադրության կենտրոնում է, եւ դա տիեզերական վայելք է իր համար: Առանց դրա նա պարզապես շնչահեղձ կլինի: Երբեմն թվում է, թե ընկնելով մազոխիզմի բախչեքը, ասում եւ անում է բաներ, որ իր դեմ հանցագործության խոստովանություններ են, բայց գիտե նաեւ, որ իր ձեռքը կրակն ընկած ուսապարկերը կաշվազերծ լինելով՝ կարդարացնեն իրեն: Նրան չի հուզում, որ մետրոյում իր համառ բարեւներն անպատասխան են մնում, մարդիկ չնկատելու են տալիս (ի դեպ, երբ մեծն Չերչիլը ճակատագրական որոշում էր կայացնելու՝ Հիտլերի դեմ պայքարել, թե հանձնվել, մետրոյում մարդկանց հետ շփվելով, պարզեց, որ մեծ ու մանուկ կանգնած են իր թիկունքին, եւ հասկացավ՝ իրենց հաղթելն անհնար է...):

Եվ այսպես, երեսը պնդած, նա վերընտրվելու է գնում:

ԱՇԽԱՐՀԸ, ԱՅՈ, ՇՈՒՌ Է ԵԿԵԼ

Օրենքի երկիր համարվող ԱՄՆ նախագահ Թրամփն իսկական պատուհաս է դարձել ողջ երկրագնդի համար: Ինքնասիրահարված, աշխարհակալի կերպարի մեջ մտած այս պարոնը սարսափ ու քաոս տարածող մեքենա է, որ կա: Խելքին փչի՝ Վենեսուելայի նախագահին (չգիտես ինչու՝ նաեւ կնոջը) կառեւանգի, կռմբակոծի Իրանը (երկիրը քարի դար ուղարկելու խոստումով), Գրենլանդիան, Կանադան, Կուբան կհամարի իրենը, հաթաթա կտա Մեքսիկային եւ իրեն չենթարկվող երկրներին, թե չէ՝ հրեն, կացինը սրած... Այսքանից հետո սա աջ ու ձախ շեփորում է, թե տասնյակ հակամարտություններ է կարգավորել (այդ թվում՝ «ալբանացիներիս» ու ազերիների միջեւ...): Նա բացեիբաց պահանջում է իրեն շնորհել խաղաղության նոբելյան մրցանակը, ինչն անամոթաբար նվեր ստացավ դրան արժանացած Մաչադուից:

Ճիշտն ասած, ինձ այնքան չի զարմացնում ԱՄՆ-ի մաչոյական լկտի պահվածքը (հիշենք Հիրոսիմայի ու Նագասակիի վրա նետած ատոմային ռումբերը, Վիետնամի դեմ անփառունակ պատերազմը, Քադաֆիի, Սադամ Հուսեյնի ճակատագրերը, Հարավսլավիայի, Աֆղանստանի դեպքերը...), որքան Իսրայելի մանիակային սադիզմը: Նեթանյահու կոչված չմարդը հողին հավասարեցրեց Պաղեստինը, հարյուր հազարավոր անմեղ մարդկանց, երեխաների սովի մատնեց, կոտորեց: Տգի պես կպել է Իրանին ու պոկ չի գալիս (ձեռքի հետ էլ ռմբակոծելով Լիբանանը): Ինձ ապշեցրին ապաստարաններում թաքնված իսրայելցիների վայրի ուրախության ճիչերը, երգն ու պարը, երբ լսեցին Իրանի հոգեւոր առաջնորդի ու վերնախավի սպանության լուրը: Եվ ակամա մտածում ես՝ Հիտլերն ինչո՞ւ էր անխնա կոտորում հատկապես հրեաներին...

Անարդար կլիներ շրջանցել ռուս-ուկրաինական «թնջուկը»: Ռուսների հարձակումն անուն էլ ուներ՝ հատուկ ռազմական օպերացիա (մոտավորապես՝ Արծրունի «գյոռբագյոռը»), անշուշտ համոզված, որ այն կավարտվեր օրեր անց: Հինգերորդ տարին է, ինչ «օպերացիայի» վերջը չի երեւում: Երկու կողմից 100 հազարավոր զոհեր ու վիրավորներ, ավերածություններ: Անհոգ դաժանությամբ հարվածներ խաղաղ բնակչությանը, էներգետիկ ենթակառուցվածքներին, ուսհաստատություններին, եւ այս ֆոնին՝ համերգներ, հումորային ու ժամանցային ուրախ միջոցառումներ... Ամենացնցողը՝ օրը մի քանի անգամ հեռարձակվող լրատվամիջոցները անմեղսունակի հպարտությամբ հայտարարում են թշնամու հարյուրավոր զոհերի ու ավերածությունների մասին:

Եվ մենք ապրում ենք 21-րդ դարում (պարզվում է՝ Աստված իզուր է մարդուն լեզու տվել...): Բա սա անբարոյականություն չէ, ի՞նչ զահրումար է:

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 6.05.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

Ո՛Չ ԵՎՐՈՊԱՅԻՑ ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ԸՆԴՕՐԻՆԱԿԵՔ, Ո՛Չ ԷԼ ՌԴ-ԻՑ՝ «ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ»

Գալուստ ՍԱՐԳՍՅԱՆ

Անկախ այն բանից, թե նախընտրական այս փուլում ինչի համար են Հայաստան գալիս եվրոպական առաջնորդները, անկախ այն բանից, թե Ռուսաստանում ինչպես են գնահատում եվրոպական առաջնորդների՝ Հայաստան գալը, միեւնույն է, հունիսի 7-ի հայաստանյան ընտրությունները ո՛չ Եվրոպա գնալու եւ հակառուս դառնալու եւ ո՛չ էլ Եվրոպայի հետ Հայաստանի հարաբերությունները ռուսական արշինով չափելու մասին են:

Այս իմաստով, մենք վստահ ենք, որ որքան էլ Եվրոպայում ուզենան, որ Հայաստանը հունիսի 8-ին գնա Եվրոպա ու իր ընտրությունների դեմոկրատական լինելու գնահատականը Եվրոպայում ստանա, եւ որքան էլ Ռուսաստանում ուզենան, որ հունիսի 8-ին Հայաստանը գնա Ռուսաստան եւ իրենցից «կազմակերպված պետություն» կառուցել սովորի, միեւնույն է, Հայաստանը չի գնալու եւ իր ընտրությունների վերաբերյալ Եվրոպայից գնահատական չի ստանալու, նույնքան էլ չի գնալու ու Ռուսաստանից «կազմակերպված պետություն» կառուցել չի սովորելու:

Այս առումով, Հայաստանի հունիսի 7-ի ընտրությունները ո՛չ Եվրոպայից գնահատական ստանալու եւ ոչ էլ Ռուսաստանից «կազմակերպված պետություն» կառուցել սովորելու մասին չեն: Դրանք արդյունաբերական ու զարգացած տնտեսությամբ Հայաստանի, 21-րդ դարում պատերազմելու հմտություններին տիրապետող հայկական բանակի, համահայկական միասնության եւ Հայաստան-Սփյուռք նոր տիպի հարաբերությունների մասին են:

Գուցե մի քիչ անհամեստ հնչի, բայց մենք վստահ ենք, որ հունիսի 7-ի ընտրությունները ոչ թե Եվրոպայից դեմոկրատիա սովորելու, այլ դեմոկրատիան Հայաստանի շահերի տիրույթում տեղավորելու, ոչ թե Ռուսաստանից «կազմակերպված պետություն» կառուցել սովորելու, այլ կազմակերպված պետությունն ու քաղաքացու բարեկեցության երաշխավորումն իրար համապատասխանեցնող Հայաստանի Հանրապետության մասին են:

Մենք հիմա արդեն հավատում ենք, որ ամեն օր փոխվող այս աշխարհում դեռ գալու է այն օրը, երբ, ինչպես եվրոպացիները Հայաստան կգան՝ դեմոկրատիան իրենց երկրների շահերի շրջանակներում տեղավորելու մեր փորձին ծանոթանալու, այնպես էլ ռուսները կգան, որ Հայաստանի՝ «կազմակերպված պետություն» կառուցելու փորձը յուրացնեն:

ՀԳ. *Մի քանի բառ էլ Երեւանում անցկացված մայիսմեկյան շքերթի մասին: Չնայած այդ շքերթում ինչոր կիսատ բան կար, բայց, միեւնույն է, մենք իրոք ուրախ ենք Երեւանում անցկացված մայիսմեկյան շքերթի կապակցությամբ: Ուրախ ենք, որովհետեւ տեսնում ենք, որ երկիրը սովորում է ինքն իրեն վերադարձնել աշխատանքն ու աշխատանքի մարդուն հարգելու ավանդույթը: Իսկ ինչ վերաբերում է շքերթի կիսատ լինելուն, ապա մենք համոզված ենք, որ Հայաստանը դեռ արդյունաբերականացնելու է իր տնտեսությունը, դեռ վերականգնելու է Բանվորի արձանը եւ հենց դրանով էլ այդ տոնին վերադարձնելու է իր ողջ իմաստն ու բովանդակությունը:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am